

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

Հ.Մ.Բ.Ի., 2008, ԹԻԻ 6 (312) VOL. XXVII N° 6 السنة السابعة والعشرون العدد السادس



ԲԱՆԱԿՈՒՄ 2008  
ԳԱՆԱՏԱ



# Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ «ՄԱՐԶԻԿ»Ի ԲԱՑԱՌԻԿԸ

Բացառիկ տարեդարձին նուիրուած բացառիկ անդրադարձով, «Մարզիկ» իր յաջորդ թիւը ամբողջութեամբ կը նուիրէ միութեան 90ամեակին:

Առ այդ, աւելի քան հարիւր էջի ծաւալով «Մարզիկ»ի բացառիկը պիտի ընդգրկէ՝

Ա) Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը լուսարձակի տակ առնող գրութիւններ:

Բ) Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնն ու դերակատարութիւնը բնորոշող բազմաթիւ վկայութիւններ Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներէն եւ սփիւռքեան թեմերու Առաջնորդներէն:

Գ) Անցնող 90 տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի մասին հայ մտաւորականութեան կատարած արժեւորումներէն հատուածներ (Ն. Աղբալեան, Ս. Թէօլէեան, Ս. Սիմոնեան, Ս. Իշխան, Հ. Սամուէլ, Ա. Հայկազ, Կ. Փօլատեան, Ա. Անոյշ, Կ. Գէորգեան, Կ. Սեհեան, Ժ.Ս. Յակոբեան, Ա. Ծառուկեան եւ այլն):

Դ) Հ.Մ.Ը.Մ.ական հիմնադիր սերունդի նուիրեալներու եւ սփիւռքեան հանրածանօթ դէմքերու վկայութիւններ (Շ. Քրիսեան, Յ. Հինդլեան, Գ. Յակոբեան, Կ. Չերազ, Կ. Ուշագլեան, Լ. Մասպանաճեան, Յ. Շահինեան, Ե. Մանուկեան, Վ.Տ. Կարապետեան, Յ.Տ. Յարութիւնեան, Ե. Տէմիրճեան եւ այլն):

Ե) Ողջոյնի խօսքեր եւ յօդուածներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի բարեկամներէ:

Շ) Հ.Մ.Ը.Մ.ական վաստակաւոր դէմքերու յուշեր եւ սրտի խօսքեր:

Ը) Լայն անդրադարձներ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին առիթով՝ Կեդրոնական Վարչութեան կազմակերպած ձեռնարկներու.-

- Հ.Մ.Ը.Մ.ի նուիրուած գիտաժողով (Երեւան, 5 Սեպտեմբեր 2008):

- «Շաւարշ Քրիսեան» լսարանի բացում (Երեւան, 6 Սեպտեմբեր 2008):

Թ) Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին զուգարիպող՝

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումարի (Ծաղկաձոր, 24-29 Օգոստոս 2008) թղթակցութիւն:

- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 2007-2011 քառամեակի Բ. լիագումարի արդիւնքներ (Երեւան, 2-6 Սեպտեմբեր 2008):

Ծ) Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին մասնակցութիւնը՝ Պուլկարիոյ միջ-մասնաճիւղային բանակումին եւ ատենապետներու ժողովին:


Ծ) Հ.Մ.Ը.Մ.ի 100րդ մասնաճիւղի հիմնադրութիւնը Մոսկուայի մէջ:





# ԹԻՒԼԻՆ ՆԻՒԹԵՐՆ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجله ریاضیه شهریه تصددها جمعیه المومتمن الریاضی



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻԷ. ՏԱՐԻ, 2008, ԹԻԷ 6 (312)



3

## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Պարզեւատրոււմ	7
■ Պատմութիւն	8
■ Մեր Կորուստները	11
■ Դամբանական	12
■ Անդրադարձ	15
■ Մասնաձիւղէ Մասնաձիւղ	25



15



25

## ԲԱԺԻՆՆԵՐ

■ Փետրին 2008	3
■ Հայազգի Դէմքեր	7
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40

## ԹՂԹԱԾՐԱՐ

Հայաստանի մէջ Շաւարշ Քրիսեանի անուան լսարանի  
 բացման առիթով՝ էջ 17-24 տեսնել յատուկ թղթածրար՝  
 նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօս հիմնադիրին:

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիգէն Աւագեան  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ  
 Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան  
 «ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Աթո Մոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան  
 Վահան Համամճեան  
 Տիրան Շահինեան  
 Սալբի Ճէճէեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Ներսէս Արք. Բախտիկեան\*,  
 Վ. Յակոբեան, Սեւան Տեկիրմէնճեան,  
 Վ. Թովաքպաշեան, Սալբի Լատոյեան  
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Ջարեհ Չէօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատվածառի սակն է 3000 լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ծշղուած է 35000 լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի  
 և Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 և Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):



ՄԱՅՈՒՆԻՍՏՆԵՐԻ  
ՄԱՍԻՆՈՒԹՅԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՆ  
ԿՆՏԱՆԵՑՈՒՄ

# «ԳԱՆՏԵՐԶ ԸՆՏԱՆԵՑՈՒՄ»

**Բ**նականն տարբեր պայմաններու մէջ կ'ապրինք ընդհանրապէս, հայրենիքէն դուրս, հին թէ նոր Սփիւռքի մէջ: Ուրիշներ մեր շուրջ կեանքի ու հացի առօրեայ պայքար կը մղեն, իսկ մենք այդ պայքարին հետ միասին եւ անկէ առաջ՝ մեր ազգային գոյութեան, ինքնութեան եւ արժէքներուն պահպանումով կը տագնապինք:

Կրկնակի պատասխանատուութիւն է, ուրեմն, իւրաքանչիւր հայ մարդու պարտականութիւնը. նախ ապահովել օրական իր հացը, ապա՝ չկորսնցնել իր ազգային դիմագիծը:

Հացի եւ գաղափարի այս երկու պայքարները եթէ չներդաշնակուին իրարու՝ կրնար խորտակել զիրար: Մէկուն բացարձակ տիրապետութիւնը կրնայ վնասակար ըլլալ միւսին: Միայն անձնական բարօրութիւն ստեղծելու ճիգն ու աշխատանքը անխուսափելիօրէն կ'անտեսէ ազգային մտահոգութիւնները: Փոխադարձաբար, երբ մէկը «ոտքով-գլուխով» հանրային գործերու մէջ կը նետուի, իր բոլոր ուժերը միութենական աշխատանքներու կը նուիրէ, անպայման երեսի վրայ կը մնան իր տան ու ընտանիքին կարիքները:

Մեր իրականութեան մէջ չեն պակսիր նուիրեալներ, գաղափարի «խենթ»եր, որոնք նիւթապէս ու բարոյապէս կը սիրեն զոհուիլ ազգային կամ միութենական նպատակներու: Անշուշտ, թիւով քիչ են նմանները: Եւ ամէն մարդէ կարելի չէ սպասել, որ առաքեալ ու հանրային գործիչ ըլլայ: Բայց ամէն հայ պարտաւորութիւնը ունի անհրաժեշտ չափով մը դուրս գալու իր կաշիէն, իր շահերու նեղ շրջանակէն եւ ապրելու հասարակաց մտահոգութիւններով: Այս է որ կ'ակնկալուի մեր ժողովուրդի անդամներէն, մեծ թէ փոքր, այր թէ կին:

Այլ ժողովուրդներու ազգային, մարզական ու մշակութային կեանքը կ'ընթանայ պետական ղեկավարութեամբ: Անոնք կը վայելեն պետական պիտօճի

բարիքները եւ ամբողջ նախարարութիւններու մասնագէտ անձնակազմերու հոգատարութիւնը: Մեր պարագային, երբ հայաստան տակաւին ցանկալի այդ հանգրուանին չէ հասած, ընդհակառակն՝ շատ յաճախ ան Սփիւռքի իր զաւակներէն կ'ակնկալէ նման մօտեցում, ստիպուած ենք «հանդերձ ընտանեօք» զօրաշարժի ենթարկուելու, որովհետեւ առանձին ենք եւ սեփական մեր ուժի փրկութենէն դուրս այլ ընտրանք չունինք:

Հետեւաբար, հայ կեանքի բնականն տարբեր պայմանները կը թելադրեն բնականն տարբեր զոհողութիւններ: Ահա թէ ինչու, մեզմէ իւրաքանչիւրը իր զաւակներուն ապագան մտածելով հանդերձ, պիտի մտածէ նաեւ իր ժողովուրդին ապագային մասին:

Թիւով փոքր եւ նիւթական կարելիութիւններով համեստ հայր կարողացած է դարեր տոկալ իր հաւատքի ուժով եւ գաղափարի աւիշով: Մեր նախորդները նախ երագին ու Գաղափարին ետեւէն վազած են, յետոյ՝ հացին: Կամ առնուազն իմաստութիւնը ունեցած են երկուքը այնպէս մը իրարու ներդաշնակելու, որ մեր ազգին չորս հազարամեայ «Ծիրանի ծառ»ը միշտ դալար մնայ, հակառակ իր ստացած ծանր հարուածներուն:

Այս տրամաբանութեամբ, իւրաքանչիւր հայ երիտասարդ իր ժողովուրդի գոյամարտի ռազմիկներէն մէկն է պայքարի ճակատներուն վրայ: Այս է պատճառը նաեւ, որ մեր մայրերն ու քոյրերը եւս հիմնական դեր ունին կատարելիք ազգային-միութենական գործերու մէջ:

Հաշտեցնել հացն ու գաղափարը՝ «հանդերձ ընտանեօք» գործի նետուելով՝ ահա փրկարար սկզբունքը, որուն պիտի հետեւինք, եթէ կ'ուզենք տնտեսապէս առողջ ընկերութիւն մը ունենալով հանդերձ, ազգային առողջ զգացումներու տէր հաւաքականութիւն մը ունենալ:

Այս արդէն Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակի մեծագոյն մարտահրաւերն է:



# ՊՐՈՆՋԷ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

**Հ**այկական Շուազոյնը վեց անգամ ծածանեցաւ Փեքինի ողիմպիականին: Ցանկալի էր անշուշտ, որ Շուազոյնին հետ «Մեր հայրենիք»ը եւս հնչէր Փեքինի մէջ, սակայն վեց պրոնջ մետալներու նուաճումը ինքնին բաւարար է, որ պէսզի հայրենի մարզական կեանքը 29րդ ողիմպիականով կարեւոր ուստում մը արձանագրէ դէպի խոստմնալից ապագայ:

Չորս տարի առաջ, Աթէնքի ողիմպիականին, հայրենի մարզիկները տուն վերադարձած էին ձեռնունայն: 2000ին, Սիւնիի մէջ անոնք տիրացած էին միայն մէկ պրոնջ մետալի (ծանրաբարձ Արսէն Մելիքեան՝ 77 քիլ. դասակարգ), հետեւաբար Փեքինի իրազործումը պատուաբեր էր եւ նշանակալից:


Հայաստան Փեքինի ողիմպիականին մասնակցեցաւ 8 մարզաձեւերու 25 մարզիկներով, որոնցմէ վեցը յաջողեցան պատուոյ հարթակ բարձրանալ եւ իրենց երկրին համբաւ ապահովել, իրենց ժողովուրդին՝ յաղթանակի բերկրանք:

### Տիգրան Գ. Մարտիրոսեան:



Լաւագոյն արդիւնքները արձանագրուեցան ծանրաբարձութեան մրցումներուն, ուր մարզիչ Աշոտ Մխիթարեանի ջանքերը լաւագոյն արդիւնաւորուեցան եւ Հայաստանը ներկայացնող հինգ ծանրաբարձներէն երեքը յաջողեցան մետալներու տիրանալ: Եւրոպայի ախոյեան Տիգրան Գ. Մարտիրոսեան (69 քիլ.), Գէորգ Դաւթեան (77 քիլ.) եւ Տիգրան Վ. Մարտիրոսեան (85 քիլ.) յաջողեցան հասնիլ մինչեւ կիսաւարտական փուլ եւ իսկ պրոնջ մետալներ: Իր կարգին, Արա Խաչատրեան (77 քիլ.)

հանդիսացաւ եօթներորդ, իսկ էտկար Գէորգեան (85 քիլ.) համեստ արդիւնքով կանուխէն հրաժեշտ տուաւ պայքարին: Ծանրաբարձութեան մրցումներուն հայրենի ներկայացուցչուհին՝ Հռիփսիմէ Խուրշուտեան (75 քիլ.) սկիզբէն մեծ յոյսեր չունէր որեւէ մետալ ապահովելու, տրուած ըլլալով որ ան վերջին պահուն միայն փոխարինեց հիւանդ Մելինէ Տալուզեանը եւ, հետեւաբար, բաւարար պատրաստութեամբ չներկայացաւ ողիմպիականին: Այնուամենայնիւ, իր դասակարգի մրցումներուն ան գրաւեց 11րդ դիրքը:



### Ռոման Ամոյեան եւ Դրաչեայ Զաւախեան:

Պատմական իրազործում մը արձանագրուեցաւ կուփամարտի մրցումներուն, ուր Հայաստան մետալի մը տիրացաւ... 32 տարի ետք: Վերջին անգամ 1976ին, Մոնթրէալի ողիմպիականին, Դաւիթ Թորոսեան պրոնջ մետալ մը ապահոված էր Հայաստանի: Փեքինի ողիմպիականին, Թորոսեանի յաջողութիւնը կրկնեց Դրաչեայ Զաւախեան, երբ 60 քիլ. դասակարգի մրցումներուն հանդիսացաւ երրորդ: Կիսաւարտականին ան տեղի տուաւ Աթէնքի ողիմպիականի ախոյեան՝ ռուս Ալեքսէյ Տիչչենքոյի դիմաց (5-10): Տեղին է նշել, որ Հայաստան իր պատմութեան ընթացքին, կուփամարտի ողիմպիական ախոյեան հանդիսացած է միայն մէկ անգամ՝ 1956ին,



**Տիգրան Վ. Սարտիրոսեան:**

Վլատիմիր Ենգիպարեանի շնորհիւ: Կուփամարտի մրցումներուն Հաստանի մնացեալ երեք ներկայացուցիչներն էին Յովհաննէս Դանիէլեան (48 քիկ.), Էդուարդ Համբարձումեան (64 քիկ.) եւ Անդրանիկ Յակոբեան: Յակոբեան իր առաջին մրցումին ղանացի մրցակիցը պարտութեան մատնելէ ետք (14-8), երկրորդին պարտուեցաւ Իւզպէքիստանի ներկայացուցիչէն (0-20): Էդուարդ Համբարձումեան իր առաջին մրցումէն իսկ դուրս մնաց մրցակցութենէ, երբ պարտուեցաւ Տոմինիկեաններու ներկայացուցիչէն (4-11): Իր կարգին, Յովհաննէս Դանիէլեան յաղթեց քամերունցի մրցակիցին (9-3) եւ պարտուեցաւ ղազախէն (7-13):

Ըմբշամարտի մրցումներուն, մետալները եկան յունահունոմէական ոճի ներկայացուցիչներէն: Մարգիչ Լեոն Զուլֆալակեանի տղոցմէ պատուոյ հարթակ բարձրացան Եւրոպայի ախոյեան Եուրի Պատրիկեա (120 քիկ.) եւ Եւրոպայի փոխ ախոյեան Ռոման Ամոյեան (55 քիկ.), մինչ կարէն Մնացականեան (60 քիկ.), Արման Աղիկեան (66 քիկ.), Արսէն Զուլֆալակեան (74 քիկ.) եւ Տենիս Ֆորով (84 քիկ.) յիշատակելի արդիւնքներ չունեցան:

Ըմբշամարտի ազատ ոճի մրցումներուն, մարգիչ Հրանդ Ենոքեանի տղոցմէ ոչ ոք յաջողեցաւ մետալի տիրանալ, նոյնիսկ... տղան՝ Յարութիւն Ենոքեանը (84 քիկ.): Միւս երկու ներկայացուցիչներն էին Մարտին Պէրպէրեան (60 քիկ.) եւ Սուրէն Մարկոսեան (66 քիկ.):

Կը մնայ նշել, որ ողիմպիականի մասնակից հայրենի մնացեալ մարզիկները գրեթէ խօսիլ չտուին իրենց մասին: Աթլետիկ մարզադային, Անի Խաչիկեան (վազք) եւ Մելիք Զանոյեան (նիզակ արձակել) դուրս մնացին գտումի մրցումներէն: Ճիւտոյի պարագային, Յովհաննէս Դաւթեան (60 քիկ.) եւ Արմէն Նազարեան (66 քիկ.) տեղի տուին իրենցմէ շատ աւելի լաւ պատրաստուած մրցակիցներու դիմաց: Իսկ լողի եւ հրաձգութեան պարագային, Միքայէլ Քոլոյեան եւ Նորայր Բախտամեան մնացին շուքի մէջ: Վերջինը Աթէնքի ողիմպիականին հանդիսացած էր չորրորդ:

204 երկիրներու շարքին, վեց պրոնզ մետալներով Հայաստան Փեքինի ողիմպիականին հանդիսացաւ 79րդ եւ նախորդ երկու ողիմպիականներէն աւելի լաւ արդիւնք արձանագրելով հիմը դրաւ յառաջիկայի իր արծաթ եւ ոսկէ ողիմպիականներուն:

2012ի Լոնտոնի ողիմպիականը, վստա՛հ, փաստը պիտի տայ այս հաստատումին:

*'Made from one single slice of natural Australian opal'*

*Classique*  
OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)

# ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՆԵՐՈՒ ԱՍՏՂԵՐԸ՝ ՉԻՆԱՍՏԱՆ, ՖԵԼՓՍ, ԵՒ ՊՈԼԹ



## Վ. Յակոբեան ՊԵՅՐՈՒԹ

«**Յ**աջողեցանք ամէն բանի մէջ, իսկ մեծաւոր... յաջողութիւնը եղաւ ողիմպիականներու ընդհանուր դասաւորման առաջին դիրքը գրաւելը: Բոլորին ապացուցեցինք, որ դարձած ենք մարզական հզօր ուժ, որուն հաշիւը այսուհետեւ պէտք է ընեն բոլորը»:

Կասկած չկայ, որ Փեքինի ողիմպիականին հետեւող չին լրագրողներէն Լօ Չէ Մաոյի այս խօսքերը կ'արտայայտեն չինացի ժողովուրդին բարոյական բարձր կորովը՝ Ձեր ողիմպիականին իրենց արձանագրած փայլուն յաջողութիւններուն լոյսին տակ:

Յաջողութեան վկայութիւնը, սակայն, միայն տեղացիներէ չի գար: Նոյն իսկ անոնց թիւ մէկ մրցակիցը նկատուող ամերիկացիները ընդունեցին չինացիներու գերակայութիւնը: Ամերիկացի մարզական մեկնաբան Մայքլ Պրիթի խոստովանութիւնը բաւարար է: Պրիթ Մոնթրէալի 1976ի ողիմպիականէն ի վեր կը մեկնաբանէ չորս տարին անգամ մը տեղի ունեցող մարզական այս մեծ իրադարձութիւնը: Ան կը հաստատ-

տէ. «Երբ ողիմպիականի բացման հանդիսութիւնը յիշեմ, կը զմայլիմ տեսածովս: Եթէ չափազանցութենէ չվախնայի, պիտի ըսէի, որ լեզուս բռնուեցաւ տեսածիս համար: Կրնամ ըսել, որ առաջին անգամն է, որ կը տեսնէի խաղերու այսքան ճիշդ ժամուն սկսիլը, յանձնախումբերու այսքան բծախնդիր աշխատանքը: Ստած չեմ ըլլար եթէ խոստովանիմ, որ չինացիները լարուած մարդամեքենաներու կը նմանին. անոնք երբեք չեն սխալիր»: Պրիթ նաեւ կ'աւելցնէ. «Սակայն կը մնայ հիմնականը՝ այն, որ Չինաստան մարզական գետնի վրայ գերազանցեց բոլորս եւ, Պարսերոնայի (1992) ողիմպիականէն ի վեր

առաջին անգամ ըլլալով, գրաւեց ընդհանուր դասաւորման առաջին դիրքը»:

Պէտք է ըսել, որ Չինաստան մեծ իրազործում մը կատարեց, երբ Բ. Ալ-խարհամարտէն ետք առաջին անգամ ըլլալով խորտակեց ողիմպիականներուն Մ. Նահանգներ-Ռուսիա գերակայութիւնը, տիրանալով 51 ոսկի մետալի, 15 ոսկի մետալի տարբերութեամբ երկրորդ դիրքը գրաւած Մ. Նահանգներէն: 51 ոսկի մետալով Չինաստան եղաւ նախկին Խ. Միութենէն ետք (Մէուլ, 1988) առաջին երկիրը, որ կը յաջողի 50 ոսկի մետալի սահմանին հասնիլ: «Ոսկի մետալ խլելու բոլոր տուեալները ունէինք: Կարողացանք բոլոր առիթները օգտագործել եւ մեր արդիւնքները եղան



ըստ մեր ակնկալութեան, յուսալով որ ձեզ կը զարմացնենք նաեւ չորս տարի ետք՝ Լոնտոնի ողիմպիականին», ինքնավստահութեամբ մը կ'ըսէ Եու թի Ման, Չինաստանի մարզական բարձրաստիճան պատասխանատուներէն մէկը: Բան մը, որ ցոյց կու տայ այն մեծ կարեւորութիւնը, զոր այս երկիրը ցուցաբերեց 2002էն՝ ողիմպիականը հիւրընկալելու որոշումէն ի վեր:

«Ինչպէս որ Աթէնքի ողիմպիականէն ետք նախատեսեցինք, Չինաստան տիրացաւ առաջնութեան եւ մի՛ զարմանաք, եթէ չինական տիրապետութիւնը շարունակուի յառաջիկայ 12 տարիներուն, որովհետեւ չին պատասխանատուները լուրջ աշխատանքի ձեռնարկած են իրենց մէկուկէս միլիառ բնակչութեան մէջէն յայտնաբերելու երիտասարդ տաղանդներ»: Այս խօսքերը կը պատկանին Փրանսական «Լ'էքիփ» թերթի թղթակից Միշէլ Ժեռարոյի: Ժեռարո կ'անդրադառնայ Պարսելոնայի ողիմպիականէն ետք (1992)

չինական «Տրաշք»ին: Չինաստան 1992ին արժանացաւ ընդամէնը 54 մետալի, որոնց 16ը միայն ոսկի: Չորս տարի ետք, Աթլանթայի մէջ, կացութիւնը մնաց անփոփոխ, մինչեւ որ Սիտնիի 2000ի ողիմպիականին ան ձեռք ձգեց 59 մետալ, որոնց 28ը՝ ոսկի: Աթէնքի մէջ, ամերիկացիք առաջին անգամ ըլլալով նեղի մատնուեցան, երբ չինացիք տիրացան 63 մետալի, որոնց 32ը՝ ոսկի (ամերիկացիներէն չորս ոսկի մետալ պակաս): Այս տարի անոնք ձեռք ձգեցին 100 մետալ, որոնց 51ը՝ ոսկի: Այս պարագային Մ. Նահանգներ չնահանջեց, այլ՝ Չինաստան յառաջդիմեց: Չինացիք պահեցին իրենց ոսկի մետալները մարմնամարզի, փինկ-փոնկի, ծանրաբարձութեան եւ սուզումի մէջ եւ նոր ոսկի մետալներ ձեռք ձգեցին այլ մարզաձեւերու մէջ, առաւելաբար կեդրոնանալով ոսկի մետալներու վրայ: Ուշագրաւ է, որ անոնք տիրացան միայն 21 արծաթ եւ 28 պրոնզ մետալներու, նուազ քան շատ մը այլ երկիրներ:



Ողիմպիականներու բոլոր ժամանակներու մեծագոյն աստղը՝ Մայքըլ Ֆելիս:



Աշխարհի ամէնէն արագ մարդը՝ Օսայլըն Պոլթ:

Այնուամենայնիւ, հակառակ իրենց ունեցած մեծ յաջողութեան եւ բերկրանքին, բոլորը նկատեցին այն մեծ յուսահաբուցութիւնը, զոր չինացիք ապրեցան, երբ իրենց «աստղերուն աստղը»՝ Լիօ Շիանկը (110 մեթր արգելաբաշակի Աթէնքի ոսկէ մետալա-

կիրը) մետասաներորդ պահուն քաշուեցաւ մրցակցութենէ, ոտքի վնասուածքի մը պատճառով: «Թռչունի բոյն» մարզադաշտը հաւաքուած բազմահազար չին բազմութիւնը այդ օր ամբողջ սրտովը լացաւ «ազգային փորձանք»ին համար:

Իր կարգին, Մայքըլ Պոլթ կը մերժէ ընդունիլ, որ Մ. Նահանգներ նահանջեց այս ողիմպիականին: Ան կը պնդէ, որ ամերիկացիք շատ լաւ էին այս խաղերուն եւ անոր ապացոյցը 110 մետալի տիրացումն է: Արդիւնք մը, որ լաւագոյնն է Լոս Անճելըսի (1984) ողիմպիականէն ի վեր: «Չորս տարի առաջ գրեթէ նոյն արդիւնքները արձանագրեցինք եւ որեւէ քննադատութիւն չսեցինք: Ինչո՞ւ: Շատ պարզ է, որովհետեւ գրաւեցինք առաջին դիրքը»: Այս կը նշանակէ, թէ Մ. Նահանգներ կը մերժէ երկրորդ հանդիսանալ, նոյնիսկ եթէ շատ մը մարզերու մէջ յառաջդիմէ:

Պէտք է ընդունիլ, որ Մ. Նահանգներ շատ լաւ իրագործում մը կատարեց 36

ոսկի մետալի տիրանալով, մանաւանդ որ ան տեղի տուաւ կարճ վազքի մրցումներուն: Արդարեւ, իրենց պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, ամերիկացիք չյաջողեցան խել տղոց եւ աղջկանց կարճ վազքի վեց մրցումներէն (100 մ., 200 մ., 4x100 մ.) որեւէ մէկուն առաջնութիւնը: Փոխարէնը, սակայն, անոնք վերատիրացան պասթիպոլի եւ վոլիպոլի տղոց արժէքաւոր ոսկի մետալներուն (վերջինը 1988էն ի վեր իրենց հասողութենէն հեռու էր): Ամերիկացիք եթէ կ'ուզեն ողիմպիականներու ընդհանուր դասաւորման պարագլուխ վերադառնալ, պէտք է փոխեն իրենց մարզական քաղաքականութիւնը եւ ուշադրութիւն դարձնեն մեծաթիւ ոսկի մետալներ ապահովող եւ իրենց կողմէ ցարդ երկրորդական նկատուող կարգ մը մարզախաղերու, ինչպէս՝ կուփամարտ, ծանրաբարձութիւն, նաւարկութիւն եւ այլն:

Ռուսիա հանդիսացաւ երրորդ, դիրքով մը գերազանցելով ողիմպիականին անակնկալը նկատուող Բրիտանիան, որ այժմէն կը պատրաստուի հիւրընկալելու 2012ի խաղերը: Բրիտանիա տիրացաւ 47 մետալի, որոնց 19ը՝ ոսկի: Բրիտանական Ողիմպիական Կոմիտէի անդամ Հէրի Ուոլգալսըն յայտնեց, որ ժամանակը հասած է լրջօրէն պատրաստուելու եւ չորս տարի ետք աւելի մեծաթիւ ոսկի մետալներ հնձելու:

Ու եթէ Փեքինի ողիմպիականը յատկանշուեցաւ աշխարհի 43 եւ ողիմպիական 132 մրցանիշներու հաստատումով: Ան իր մասին խօսիլ տուաւ նաեւ երկու մեծ աստղերով. առաջինը՝ լուդորդ Մայքըլ Ֆելիս, որ տիրացաւ ութ ոսկի մետալներու եւ հաստատեց աշխարհի վեց մրցանիշ: Երկրորդը՝ ժամայքացի «հրթիռ»՝ Օսայլըն Պոլթ, աշխարհի ամէնէն արագ մարդը, որ իր բացառիկ արդիւնքներով գլխապտոյտ պատճառեց մարզական աշխարհի բոլոր սիրահարներուն, անխտիր:



# ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍՈՒՐԻՈՅ ԹԵՆԻՍԻ

## ՆԱԽԿԻՆ ԱԽՈՅԵԱՆ ԴԱԲԻԹ ԴԱԲԻԹԵԱՆԻ ՀԵՏ

### ՍԵՒԱՆ ՏԵԿԻՐՈՒՄԸ ԵՎ ՉԱԼԵՊ

**Դ**աբիթ Դաբիթեան ծնած է Հալէպ, 1963ին: Յաճախած է Ազգ. Սահակեան վարժարան: Միջնակարգ ուսումը ստացած է Ազգ. Քառնէն Եփփէ ճեմարանէն, սակայն պայմաններու բերումով կիսատ ձգած է ուսումը եւ նետուած է կեանքի ասպարէզ: Ամուսնացած է Թամար Արուշեանի հետ եւ ունի երկու մանչ՝ Հայկ եւ Սեւակ:

Դաբիթին հետ հանդիպումը կատարուեցաւ «Շահպա Ալ Շամ»ի մարզադաշտին մէջ, ուր ան երկար տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ իբրեւ մարզիչ: Դաբիթ մեզ դիմաւորեց ժպտուն դէմքով եւ առաջնորդեց իր գրասենեակը:

Քաջալերուած իր ազնիւ դիմաւորութենէն, մեր զրոյցը եղաւ աշխոյժ եւ հետաքրքրական:

Երբ հարց տուինք, թէ ի՞նչպէս կատարուած է մուտքը մարզական աշխարհէն ներս, պատասխանը շատ ուշագրաւ էր: Ան ըսաւ, թէ փոքր տարիքէն սիրած է ֆութպոլն ու պասքէթը, իսկ օր մը Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին մէջ պատահամբ ներկայ գտնուած է թենիսի փորձի մը, ուր մարզիկները իրեն առիթ տուած են քանի մը գնդակ հարուածելու եւ այսպէսով մոռցած է ֆութպոլն ու պասքէթը եւ տարուած է թենիսով: Սակայն, նիւթական պայմաններու բերումով, Դաբիթին համար սեփական ռաքէթ ունենալը երազ եղած է: Օր մը, առիթով մը, ընկերոջը մայրը իրեն 25 ս.ո. նուիրած է: Դաբիթ դժուարութեամբ ընդունած է այդ գումարը, սակայն ընդունելէ ետք, առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու, գնած է ռաքէթ մը, գնդակին գինն ալ պարտքի ձգելով: Եւ այսպէս, Դաբիթ ամէն օր կ'ուղղուի Հ.Մ.Ը.Մ.ի դաշտ, ուր դաշտին պատը իբրեւ ցանց օգտագործելով՝ կը կատարէ իր փորձերը, առանց մարզիչ ունենալու եւ ինքնաշխատութեամբ կը հասնի այս օրերու իր փայլուն արդիւնքին:

Թենիսի ասպարէզին մէջ, Դաբիթ կատարած է հետեւեալ իրագործումները.-

- 1977ին, միջ-դպրոցական ախոյեանութեան երրորդ:
- 1978ին, Հալէպի ախոյեան:
- 1979ին, Հ.Մ.Ը.Մ.ի ախոյեան:
- 1980ին, Սուրիոյ ախոյեան:
- 1982ին, Կիպրոսի մէջ ներկայացուցած է Սուրիան:
- 1984ին, Լիպիոյ մէջ ներկայացուցած է Սուրիան՝ երրորդ

հանդիսանալով:  
1986ին, Յորդանանի մէջ խաղացած է Մարոքի ախոյեանին դէմ:

1987ին, Թուրքիոյ դէմ «Տէյվիսի բաժակ»ի մրցում:  
1988ին, Սինկափոլրի ախոյեանին դէմ մրցում:  
Իր նախասիրած աստղերն են Անտրէ Աղասին եւ Շթէֆի Կրաֆը:

Այս բոլորը լսելէ ետք հարց տուինք ախոյեանին, թէ յաջող մարզիկ մը ըլլալու պայմանը ի՞նչ է: Պատասխանը հետեւեալն էր. «Նախ սիրել մարզախաղը, ապա ունենալ ճկուն մարմին, կամք, ձիրք, անսահման համբերութիւն, հետեւողական մարզումներ եւ լայն երեւակայութիւն»:

Ներկայիս Դաբիթին երէց մանչը բռնած է հօրը ուղին եւ դարձեալ ինքնաշխատութեամբ եւ հօրը հետապնդումով կը մասնակցի զանազան մրցումներու: Դամասկոսի եւ Լաթաքիոյ կրտսեր ախոյեաններու դէմ ան կ'արձանագրէ փայլուն արդիւնքներ:

### ԵՂԲ. ԶՈՐԱՊ ՊՈՍՆՈՅԵԱՆ ՅԵՏ-ՄԱՅՈՒ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ Յ.Ս.Ը.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆԻՆ


10 Յուլիս 2008ին, Յ.Ս.Ը.Մ.Ի Լիբանանի ընտանիքը կորսնցուց իր շրջանի հաւատաւոր անդամներէն, երկար տարիներ Պէյրութի մասնաճիւղի վարչական, ապա՝ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Զոհրապ Պոսնոյեանը:



Եղբ. Պոսնոյեանի միութենական վաստակին առ ի գնահատանք, Յ.Ս.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը յետ-մահու գայն պարգևատրեց միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Շքանշանին տուչութիւնը կատարուեցաւ եղբոր թաղման օրը՝ 12 Յուլիս 2008ին, Պէյրութի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ կատարուած յուղարկաւորութեան ժամանակ: Շքանշանը եղբոր ընտանեկան պարագաներուն յանձնեց Յ.Ս.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան:

# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



նօթ դաշնագիրը Գեմալի հետ, հայ կեանքի ողբերգութեան ամէնէն տխուր վարագոյրներէն մէկը պիտի բանար... Կիլիկիոյ հայութեան պարպում, Իզմիրի ու Պոլսոյ գրաւում եւ հայերու փախուստ, ներքին գաւառներու մէջ վերապրող հայերու թրջական սահմաններէն դուրս հանում: Անդին, գրեթէ նոյն թուականներուն, անկախ Հայաստանի իրաւունքներու բռնադատում—համայնավարացում, որուն հետեւանքով տեղի ունեցան արիւնահեղութիւն, բանտ եւ աքսոր: Այս բոլորը Ապրիլեան Եղեռնէն քիչ ետք, երբ տակաւին անապատներուն մէջ ու Հայ Գողգոթայի ճամբաներուն վրայ հայու արիւնը չէր ցամքած, երբ տակաւին մէկ միլիոն նահատակներուն բլրացած ոսկորները արեւու տակ խանձելու էին դատապարտուած, նոր տեսակի ջարդի կարաւանները պիտի գային ու տարածուէին տարաշխարհի բոլոր հորիզոններուն՝ ենթակայ այլազան կլիմաներու, նոր միջավայրերու, անհարազատ բարքերու...

Ձանգուածային արտագաղթի գլխաւոր երկու հոսանքներէն առաջինը՝ Իզմիրի ու Պոլսոյ շրջաններէն, իր ոտքը պիտի կոխէր եւրոպական ցամաքամասին արեւելեան սահմաններուն վրայ ու պիտի տարածուէր դէպի արեւմուտք՝ մինչեւ Ատլանտեանի միւս ափերը: Իսկ երկրորդը, աւելի զանգուածայինը, որուն հետ 20.000 որբերու բանակը, կազմուած՝ Կիլիկիոյ, Փոքր Հայքի, Խարբերդի, Տիգրանակերտի եւ Ուրֆայի նահանգներու հայերէն, իր ճամբան պիտի գտնէր դէպի հարաւ՝ Իրաք, Սուրիա, Լիբանան ու մասամբ Պաղեստին եւ այս երկիրներէն ալ տարածուելու արեւմտեան կողմն աշխարհի...

Հայր ա՛լ դադրած էր նախապատերազմեան շրջանի պանդուխտը ըլլալէ, ան գաղթական էր տունով ու տեղով, գաղթական, գաղութներ որոնող, տեղաւորուելու, հաստատուելու:

Նորահաստատ այս գաղութներուն մէջ ամէնէն մեծը Սուրիան ու Լիբանանը եղան: Այդ օրերուն, ամբողջ տարածութիւններ Հայկալի ու Պէյրութի անմիջական շրջակայքը դարձան նոր քաղաքներ՝ իրենց յատկանշական կառուցուածքով, թիթեղէ պատ ու տանիք տնակներով: Քարիւղի հին ու փտած թիթեղէ շինուած այդ տնակներուն մոտայլ զանգուածները, որոնց ներքեւ տարագիր հայ մատուց մանուկները իրենց սեւ ու պճտուն աչքերը սկսան բանալ, շատ պատկերաւոր ձեւով մը յորջորջեցան թիթեղաքաղաք կամ վրանաքաղաք...

Հայկալ, Սիւլէյմանիէի հրապարակին վրայ, ո՛վ չէ տեսած այն վրանաքաղաքը, որ քիչ ատենուան մէջ կառուցուեցաւ. շատերը անակնկալ կերպով գտան զայն եւ «աճապարանքով շինուած քաղաք» յորջորջեցին:

«Գաղթականները շինեցին զայն, կոտորուած ու հա-

## Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Դ. ՄԱՍ

**Մ**իջազգային քաղաքական կեանքի նոր դիրքաւորումը Մերձաւոր Արեւելքի մէջ, արեւմտեան պետութիւններուն եւ Ռուսիոյ համար, անհրաժեշտ էր վերականգնելու խորտակուած ու պարտուած թուրքիան՝ Մուսթաֆա Գեմալի ձեռքով, որուն շարժումը, Կիլիկեան հողերու բռնագրաւումէն զատ, հայութեան պիտի արժէր 20.000 մարդկային զոհ, Իզմիրի աղէտ, նոր գաղթականութիւն՝ ձմրան ձիւնին ու բուքին: Հակառակ Փրանսական բանակին դասալքումին, հայեր Այնթապի, Մարաշի, Հաճընի մէջ, գերմարդկային ճիգերով ինքնապաշտպանութեան անհաւասար կռիւ մղեցին՝ կարենալ նուազագոյն կորուստով ազատելու այս նոր փորձանքէն...

Արդարեւ, 1921 Հոկտեմբեր 20ին, Յրանքլին Պուլիոնի ծա-

լածուած հայ գաղթականները, կմախացած այն մարդիկը որ ցնցոտիներու մէջ կծկուած են, որոնց մէջ կարծես խորտակուած է ամէն բան, եւ կեանքը զգուանքի ձեւ առած:

«Յակադրութիւն մը կայ իրականութեան եւ կարծիքի մէջ, այդ քայքայուած բազմութիւնները տակաւին կը ցուցադրեն այն ստեղծագործող ցեղը, որուն վրայ հազար-հազար տապարներ բթացան...»

«... Այս ցեղը, որուն դէմ մոլեգնօրէն այնքան վայրագութիւններ ուղղուեցան, այնքան դաւեր լարուեցան, ու այնքան կանոնիկ կոտորածներ սարքուեցան, որուն սրտին մէջ այնքան թոյներ հոսեցան գետերու նման, որուն գանկին վրայ այնքան սուրբեր գուլցան [բթացան-«Մ.»], չի' մեռնիր, չի' մեռնիր, որովհետեւ անոր մէջ չի մեռնիր այն գիտակցութիւնը որ հրամայական անհրաժեշտութիւններ կ'ըմբռնէ. չի մեռնիր անոր դիմադրական եւ ստեղծագործ ուժը, որ տիեզերական Աստուծոյ մը ձեռքով դրոշմուած է անոր հոգիին խորը, զայն աստուածացնելու համար... Անկկա պիտի ապրի,



1925. Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի հիմնադրութեան օրերուն դաշտի նորոգութեան աշխատանքի լծուած Հ.Մ.Ը.Մ.ականներ:

պիտի ապրի եւ բարձրանայ իր անկումէն, այդ հաւատքի ամենացայտուն ապացոյցը վրանաքաղաքն է»<sup>(1)</sup>:

*Պէյրուսի հայ գաղուիքը իր մէկ դարու գոյութեան ըն-*

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

**HOTEL**



**PAVILLON MONCEAU**  
PARIS

*Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.*



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

[infos@pavillon-monceau.com](mailto:infos@pavillon-monceau.com)  
[www.pavillon-monceau.com](http://www.pavillon-monceau.com)

Թացքին, կծկուած ինքն իր մէջ, ու գոհացած Ս. Նշան վանքով ու անոր կից 40-50 աշակերտներու վարժարանով մը, իր գոյութիւնը պահած էր մինչեւ համաշխարհային պատերազմը: Այս պատերազմէն վերջ, հայկական կեանքի յեղաշրջման հետեւանքով, ինչպէս Հալէպ, Պէյրութն ալ պիտի դառնար հայկական մեծագոյն գաղութներէն մէկը:

«1920 Մայիս 25ին, Այնթապէն Զալէպ կը մեկնի մեծ կարուան մը, որ մասնաւորաբար Ռըլիֆի եւ Ամերիկեան Կարմիր Խաչի պաշտպանեալներն էին, շուրջ երեք հազար որբ եւ այրիներ... Այս երեք հազարին մեծագոյն մասը, ամիս մը վերջ, Պէյրութի Քարանթինա, վրաններու ներքեւ առժամեայ բնակութիւն հաստատած էին, ուրկէ հեզտիտէ օրդ. Ֆրիլըրսըն իր որբանոցը Շիվան, օրդ. Ֆորմէն Անթիլիաս, պրն. Թրէվիզ իր մանչերը Ժիպէլլ եւ պրն. Ղալիկեանն ալ Զայկական Որբանոցը ճիւղի փոխադրելով, Լիբանանի հայ գաղութին հիմը կը դնէին»<sup>(2)</sup>:

Այս առաջին կարուանէն ետք, 1921էն սկսեալ, հետզհետէ պիտի գային Տէօրթ Եոլի, Ատանայի, Մերսինի, ապա Մարաշի, Խարբերդի, Կեսարիոյ, Գոնիայի հայկական եւ ամերիկեան որբանոցները եւ անոնց հետ հազարաւոր հայ ընտանիքներ ու հաստատուէին Լիբանանի հիւրընկալ ափերուն վրայ:

Այդ օրերուն, Պէյրութի «Յայ Ազգ. Միութիւնը, որ միակ ազգային իշխանութիւնն էր, ֆրանսական կառավարութեան եւ տեղացի համայնքներու բարեացակամութեան

շնորհիւ, Պէյրութի զանազան թաղամասերուն մէջ հարկադրուեցաւ ապաստարաններ ապահովել, չքաւորներու համար վրաններ ու սնունդ հայթայթել, սակայն գաղթականներու օրէ օր ստուարացող հոսանքին առջեւ, ինչպէս ուրիշ տեղեր, հոս ալ սկսաւ քեմբի դրութիւնը... վրաններուն յաջորդեցին տախտակեայ կամ թիթեղեայ աններկայանալի ու հակառողջապահական հիւղեր... առաջին վրանաքաղաքը կազմուած էր, դեռ շատեր անապաստան էին, հարկ եղաւ հիմնել ուրիշներ»<sup>(3)</sup>: Այսքանը տակաւին բաւական չէր ամոքելու համար Թշուառութեան մէջ ապրողներուն վիճակը:

«1922-1923ին,- կը պատմէ Հայր Պօղոս Արիս,- անցուցի 15-20 ամիսներ, որոնք կեանքիս ամենն դժնդակ ամիսները եղան: Կը յիշեմ, օր մը, երեկոյեան, կանչուեցայ Ազգային Միութեան կողմէ, որպէսզի Չեխական Կարմիր Խաչին ներկայացուցի- չը պտտցնեմ հայկական քեմբին մէջ եւ անոր թարգմանը ըլլամ, որովհետեւ միայն գերմաներէն կը խօսէր: Զայկական քեմբը գացինք. ցուրտ քամի մը կը փչէր, անձրեւը դանդաղօրէն կը տեղար:

(Շար. 4)

(1) «Սուրիահայ տարեգիրք», 1924:

(2) Նոյնը:

(3) «Սուրիահայ տարեգիրք», 7. Պալեան, Պէյրութ:


ARMENIA

for private and group trips


www.saberatours.fr


- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

# Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY







11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com



48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com

Photos: © Yann Artus-Bertrand / Ag. Terre vue du Ciel. Licence 075 960031 - Studio / KCB 2005 / 1405

# ԵՂԲ. ՎԱՐՈՒԺԱՆ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՄԱՀՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄԸ

**24** Յուլիս 2008ին, եգիպտահայութիւնը կորսընցուց յետ-եղեռնեան սերունդի իր պատկանելի ներկայացուցիչներէն եղբ. Վարուժան Գազանճեանը, որուն բովանդակ կեանքը իր պաշտելի միութեան՝ Զ.Ս.Ը.Մ.ին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ծամբով անսահման նուիրաբերում մը եղաւ հայկական Սփիւռքի կազմակերպման ընդհանրապէս եւ եգիպտահայութեան ազգային ընդհանրական արժէքներու պահպանման յատկապէս:

Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի պատուակալ նախագահ եւ Գահիրէի թեմական ժողովի երկարամեայ անդամ եղբ. Վարուժան Գազանճեան մահացաւ 24 Յուլիս 2008ին, սրտի կաթուածի հետեւանքով: Եղբոր յուղարկաւորութիւնն ու ազգային թաղումը տեղի ունեցաւ Կիրակի, 27 Յուլիս 2008ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ՝ Թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանի:

Յուղարկաւորութեան ներկայ գտնուեցան Թեմի Հայ Կաթողիկէ Առաջնորդ Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, Եգիպտոսի մէջ Հայաստանի դեսպանատան ղեկանազիտական կազմի անդամներ (դեսպանը կը բացակայէ երկրէն), Գահիրէի Ազգային իշխանութեան անդամներ՝ գլխաւորութեամբ թեմական ժողովի ատենապետ Անդրանիկ Մեսրոպեանի, Աղեքսանդրիոյ Ազգային իշխանութեան անդամներ՝ գլխաւորութեամբ թեմական ժողովի ատենապետ Լեւոն Գաղթացեանի, վշտակիր հարազատներ եւ եգիպտահայ հոծ բազմութիւն մը:

Արարողութենէն ետք, սգակիրներուն մխիթարութեան իր խօսքը ուղղեց Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեան: Խօսքին արաբերէն թարգմանութիւնը ներկայ օտար հասարակութեան կարգաց Շանթ Կապէճեան: Ան կարդաց նաեւ Գահիրէի Ազգային իշխանութեան դամբանական խօսքը:

Այնուհետեւ, դամբանական խօսքեր արտասանեցին «Յուսաբեր»ի շրջանակին կողմէ եղբ. տղթ. Սուրէն Պայրամեան (խօսքը տեսնել էջ 12), «Ջահակիր»ի շրջանակին կողմէ Պետ-



րոս Մովսէսեան եւ «Արեւ»ի շրջանակին կողմէ Նորայր Տէօվլէթեան:

Հուսկ, եղբոր մարմինը փոխադրուեցաւ Մարմինայի ազգային գերեզմանատուն, ուր եկեղեցական արարողութեամբ եւ «Վէրքերով լի» խմբերգով ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

## ՍԵՃ ԿՈՐՈՒՍԵԱԸ

Եղբ. Վարուժան Գազանճեան ծնած էր 1931ին, Գահիրէ: Նախնական կրթութիւնը ստացած է Մխիթարեաններու տեղւոյն վարժարանը, իսկ բարձրագոյն ուսումը՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանը (Լինքըլն քոլէճ)՝ AUC: Զաւակն էր Գահիրէի «Արարատ» մարզական ակումբի (հիմնուած՝ 1914ին, Հ.Մ.Ը.Մ.ին միացած՝ 1946ին) հիմնադիր երկրորդ սերունդի անդամներէն Վարդան Գազանճեանի:



Եղբ. Վարուժան պատանեկութեան եղած է «Արարատ»ի սկաուտական միաւորի անդամ: Հետագային ան մաս կազ-



մած է ակումբի պասքեթպոլի երէց տղոց խումբին: Շրջան մը եղած է խմբապետ:

Անդամ էր եգիպտահայ մարզական խումբերու կազմակերպիչ յանձնախումբին: 1978էն սկսեալ եղած է Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչական անդամ՝ գանձապահ, փոխ ատենապետ եւ ատենապետ: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական Ժողովին եւ դիւաններու Ա. Ժողովին (Աթէնք եւ Միլանո):

1993ին, եղբ. Վարուժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ պարգեւատրուած է «Արժանեաց» շքանշանով: 2000էն ան պատուակալ նախագահն էր Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի:

2005ին, ազնիւ բարերարութեամբ մը ան իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Պէնիտենցիալ Կրթական Կենտրոնի ստեղծմանն ու բարեկարգման աշխատանքներուն:

Ամուսնացած էր եւ հայր երկու զաւակի՝ Վարդան եւ Հէրի:

# ԵՂԲ. ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ՝ ԵՂԲ. ՎԱՐՈՒԺԱՆ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ

Ստորեւ կու տանք եղբ. տղքթ. Սուրէն Պայրամեանի դամբանականը՝ արտասանուած եղբ. Վարուժան Գազանճեանի յուղարկաւորութեան, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Դամբանականը արտասանուած է յանուն Եգիպտոսի Յ.Յ.Գ. մարմիններուն եւ ուղեկից միութիւններուն:

**Ա**փսոսանքով եւ խորագգաց վիշտով համակուած յուղարկաւորելու եկած ենք եգիպտահայ ժամանակակից գաղութի արժէքաւոր եւ հարազատ զաւակներէն մէկը, որուն յանկարծական շիջումը անհաւատալի եւ շփոթահար վիճակի մատնած է գաղութահայ բոլոր միաւորները՝ իրենց զաղափարական, բարեսիրական, կրթական, մարզական թէ երիտասարդական կառույցներով:

Ոչ եւս է Վարուժան Վարդան Գազանճեանը:

Դժուար է ընդունիլ պատահարը:

Դժուար է հաւատալ իրականութեան:

Որովհետեւ, նկատի ունենալով տոկոսային հաշուով ազգային-հասարակական կեանքի մէջ գործող անհատներու նուազումը եւ նկատի ունենալով անտարբերութեան հոսանքին հետեւողներու բանակը, բարձրօրէն գնահատելի է արժէքը այն քիչերուն, որոնք կառչած կը մնան զաղափարականի մը տեսլականին: Հոս է, որ կրկնակի կ'ողբանք մեր սիրելի ըն-

կեր Վարուժանին անժամանակ կորուստը:

«Աշխարհի ամենամեծ կորուստը մարդու կորուստն է: Մարդու կորուստը անդարձ կորուստ է»: Հայրենի եղերաբախտ արձակագիր Մուշեղ Գալշոյեանի խօսքն է այս, իր հերոսներէն մէկուն բերնով:

Գլխազիր մարդու կորուստ...

Գլխազիր ու հաւատաւոր մարդու կորուստ...

Գաղափարապաշտ հայու կորուստ...

Ահա, այդ գլխազիր «մարդ»երէն մէկն էր ընկ. Վարուժան:

Ներկայութիւն մըն էր, գոր կը փնտռէինք,

Արժէք մըն էր, որուն կարօտը ունէինք,

Բարեկամ մըն էր, որուն կը վստահէինք,

Հանրային թէ կազմակերպական մարզերու մէջ պատասխանատուութիւններու կոչուած գործիչ մըն էր:

Մէկը այն հազուագիւտ մարդոցմէ, որ կ'արժեւորէր իր նստած աթոռն ու հանգամանքը իր սկզբունքներով, եւ ոչ թէ կ'արժեւորուէր իր նստած աթոռով:

Գաղափարական շարքերէ ներս ճանչցանք ու յարգեցինք զինք իբրեւ սիրելի ու ազնիւ ընկեր, իբրեւ հեռատես, իրատես եւ նաեւ կեանքի փորձառութեամբ գործող երէց ընկեր:

Ուղղամիտ ու պարկեշտ հայորդի մը ըլլալու կողքին, նուիրեալ ու պարտաճանաչ կուսակցական մը եղաւ ան, ու յիսուն տարիներ շարունակ Դաշնակցութեան միջոցով անսակարկ ծառայեց իր պաշտած ժողովուրդին:

Հ.Յ.Դաշնակցութեան եգիպտահայ կառույցը իր պատասխանատու մարմինով, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ զոյգ շրջաններու կազմերով, անդամներով եւ համակիր ստուար շարքերով կը սգայ անոր կորուստը, իբրեւ պատկառազուղեկ վար, անաչառ ու անյիշաչար ընկեր ու բարեկամ:

Իբրեւ անշահխնդիր ու պարկեշտ անձ, հայութեան միասնականութեան ուժեղնօրէն հաւատացող, ողբացեալը ջերմ պաշտպան մը եղաւ գաղութահայ զանգուածները համերաշխ ու գործակցական ոգիով առաջնորդելու ազգանուէր աշխատանքին, եւ առ այդ՝ պարոն Գազանճեան, եղբայր Վարուժան, ընկեր Վարուժ, կը վայելէր ամէնուն համակրանքը ու կ'արժանանար բոլորին յարգանքին:

Ան դարբիններէն մէկը հանդիսացաւ Գահիրէի Ազգային իշխանութեան համագործակցական կազմի գոյառութեան եւ 1975էն առ այսօր եղաւ Թեմական Ժողովի եւ քաղաքական գործադիր ժողովներու անդամ, անշահխնդիր կեցուածքով յանձանձեղու համար գաղութին վարչամեքենային պատասխանատու աշխատանքները:

Երիտասարդ սերունդի դաստիարակութիւնը եւ մարզական շարժումը առանցքային ներկայութիւն եղան Վարուժան Գազանճեանի կեանքին մէջ, անոր վաղ պատանեկութենէն:

Հ.Մ.Ը.Մ.ն ու անոր հայաբոյր յարկերը եղան անոր երկրորդ տունը:

Սկառուտական շարքերէն, պասքեթպոլի մարզադաշտերէն մինչեւ վարչական անդամի, պատասխանատուի եւ ատենապետի իր յանձնառութիւնները ան եղաւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.:

## Յ Ա Բ Ա Կ Յ Ա Գ Ի Ր

Սիրելի եղբ. Վարդան Գազանճեան եւ համայն Գազանճեան ընտանիք, Խոր վիշտով տեղեկացանք հաւատաւոր եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Վարուժան Գազանճեանի անակնկալ մահուան լուրը:

Եղբ. Գազանճեան Հ.Մ.Ը.Մ.ը դարձուցած էր իր կեանքի անբաժանելի միութիւնը եւ իր գործունէութեամբ, միշտ ու միշտ, բարոյական եւ նիւթական նեցուկ կանգնած է իր սիրելի միութեան: Իր անսակարկ նուիրումին շնորհիւ արժանացած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը Սփիւռքի եւ Հայաստանի մէջ կը սգայ իր հաւատաւոր եղբոր մահը:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հաճեցէք ընդունիլ մեր խոր ցաւակցութիւնները: Եղբ. Վարուժան Գազանճեանին անունը յաւերժ պիտի յիշուի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ:

Աստուած հոգին լուսաւորէ:

Հ.Մ.Ը.Մ.ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

«Արարատ»ի շրջապատէն ներս, որուն ծառայեց անմնացորդ նուիրումով եւ անվերապահ զոհողութեամբ:

Եղբայր Վարուժան Գազանճեանի անակնկալ մահուան առթիւ նշանակալից է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ցաւակցագիր նամակով բնութագրուած այն պարբերութիւնը, թէ՛

«Եղբ. Գազանճեան Հ.Մ.Ը.Մ.ը դարձուցած էր իր կեանքի անբաժանելի միութիւնը եւ իր գործունէութեամբ, միշտ ու միշտ, բարոյական եւ նիւթական նեցուկ կանգնած է իր սիրելի միութեան: Իր անսակարկ նուիրումին շնորհիւ արժանացած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

«Այսօր, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը Սփիւռքի եւ Հայաստանի մէջ կը սգայ իր հաւատաւոր եղբոր մահը», կ'եզրափակէր ցաւակցագիր վկայութիւնը:

1960. Եղբ. Վարուժան Գազանճեան Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի հիմնադիր սերունդի անդամներէն Ստեփան Ամիրայեանի եւ Թորոս Խաչատուրեանի հետ:



Եզրիպատահայ բարեսիրական եւ կրթական հաստատութիւնները եւս անմիջական գուրգուրանքին եւ ուշադրութեան առարկան դարձած էին եղբօր համար:

Հայ Կարիքի Խաչի, «Այծեմնիկ» Հանգստեան Տան, հայ բարեսիրաց միութիւններու գործունէութիւնը արժանացած է Գագանճեան ամոլին հետեւողական քաջայերանքին: Նոյնը կարելի է հաստատել տեղական ու հայրենիքի օգնութեան փութացող ծրագիրներու պարագային:

«Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութիւնն ու անոր հովանաւորութեամբ գործող «Յուսաբեր» ակումբներու գործունէութիւնը եւ «Յուսաբեր» օրաթերթի յարատեւութիւնը եղան Վարուժան Գագանճեանի հոգերուն կիզակէտը:


Իբրեւ երկարամեայ վարչական անդամ եւ պատասխանատու ղեկավար, առօրեայ կշռոյթով ան հետեւեցաւ անոնց ծրագիրներուն եւ օրաթերթին անխափան լոյս ընծայման ընթացքին:

Եւ վերջապէս, Վարուժան Գագանճեան եղաւ օրինակելի ու տիպար հայրն ու սիւնը իր ընտանեկան յարկին, հայաժայել դաստիարակութեամբ եւ շունչով օժտելով իր հոգեհատոր գաւակներն ու թոռները:

Յանուն՝

Եզրիպտոսի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատասխանատու մարմիններուն,

«Յուսաբեր» եւ «Յառաջդիմասէր» (Աղեքսանդիա) մշակութային միութեանց,



**Եղբ. Վարուժ կը ցնծայ Զ.Ս.Ը.Ս.ի 85ամեակին նուիրուած Եզրիպտահայ միջ-ակմբային պասքէպօլի մրցաշարքին Զ.Ս.Ը.Ս.-«Արարատ»ի յաղթանակը:**

կը ձգես անմահ յիշատակ:

Վարձքը լիովին կատար:

Կը խոնարհիմ սիրելի եւ անփոխարինելի ընկեր Վարուժան, անչնչացած ու յոգնաբեկ մարմինդ պարփակող այս դազաղին առջեւ:

Վստահ եղիր որ գործդ շարունակողներ պիտի ըլլան, անպայման:

Խուճկ եւ աղօթք՝

Յարգա՛նք պայծառ ու անմեռ յիշատակիդ:

## Մ Տ Ա Յ Ա Ն Ք

**ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԱՐԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՆ**

**Հիմնադրութեան եւ Գործունէութեան 60ամեակ**

**Հրատարակութիւն՝ Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան Զ.Ս.Ա.Կ.-ի Հիմնադրութեան եւ Գործունէութեան 60ամեակի հատոր**

**Գլխաւոր խմբագիր եւ հրատարակութեան պատասխանատու՝ Կարինէ Ղարախանեան: Խմբագրական կազմ՝ Արմենուշ Առաքելեան, Անահիտ Աբրահամեան, Ռուբինա Օհանեան: Թեհրան, 2007, 818 էջ:**



**2003. Զ.Ս.Ը.Ս.ի 85ամեակի սոնակատարութեան կարկանդակը հատելու պահուն:**



# ՅԱՐԳԱՆՔ ԽԱՆԱՍՈՐԻ ՀԵՐՈՄՆԵՐՈՒՄ

## Վ. Թոփաքպաշեան ՍՈՖԻԱ

**111** տարի առաջ, 25 Յուլիս 1897ին, 247 հայ ֆեոտայիներ, զինուած եւ կազմակերպուած, կը յարձակին քրտական Մագրիկ ցեղին վրայ եւ կը կոտորեն ցեղին բոլոր այրերը: Կիներն ու երեխաները, որոնք ճողոպրած են հրացանաձգութենէն, ազատ արձակուած են: Այսպէս եղած է նախնական որոշումը մարտիկներուն՝ վեհանձն ըլլալ հիւանդներու հանդէպ, ո՛չ մէկ պարագայի դպչիլ տղոց եւ կիներուն: Այս դէպքը հայոց պատմութեան մէջ կը յիշուի «Խանասորի արշաւանք» անունով: Պատճառը, որ կ'արժարժէ այս արշաւանքը, պատիժն է, արդարահատուցումը:



Արդարեւ, 1896 թուին, երբ Ապտիւլ Համիտ Բ. կ'իրագործէ արիւնալի սպանդը, Վան քաղաքի հայ բնակչութիւնը հերոսաբար կը կանգնի հերոսաբար թուրք բանակին դէմ, պաշտպանելու համար իր քաղաքը: Արեւմտեան զօրութիւններու եւ Ռուսաստանի միջամտութեան արդիւնք՝ Վանի պաշտպանութենէն ողջ մնացած ընդամէնը 800 հոգի, որոնց մեծ մասը անգէն, ազատ կ'արձակուի՝ փոխադրուելու համար Պարսկաստան: Ճիշդ սահմանին վրայ, սակայն, Մագրիկ ցեղի հրոսակ մը կը կոտորէ զանոնք անխտիր, առանց սեռի եւ տարիքի խտրութեան: Հագիւ քանի մը հոգի հրաչքով ազատած կը հասնին Պարսկաստանի Սալմաստ քաղաքը եւ կը նկարագրեն դժբախտութիւնը: Հ.Յ.Դաշնակցութեան ղեկավարներէն Նիկոլ Դոմման կ'առաջարկէ վրէժխնդրութիւն անմեղ արիւնահոսութեան դէմ եւ անմիջապէս կ'անցնի գործի՝ կազմակերպելու արշաւանք մը Մագրիկ ցեղին եւ մասնաւորաբար անոր առաջնորդ Շարաֆ Բէկին դէմ:

Կամաւորներ կու գան Օսմանեան Կայսրութեան բոլոր անկիւններէն, կը հաւաքուին 247 հայեր, մեծ մասամբ՝ 25-30 տարեկան: Ամէնէն երիտասարդը 18 տարեկան, իսկ ամէնէն տարիքոտը՝ 48: Խանասորի արշաւանքին պատրաստութիւնը կատարուած է արտակարգօրէն, կազմակերպուած են հետեւակ խումբեր եւ ձիաւորներ: Կը վերստեղծուի քրտական վրաններու սարքաւորման պատկերը՝ որոշելու համար հայե-

րու յարձակումի մանրամասնութիւնները: Իբրեւ հրամանատար կ'ընտրուի Վարդանը, կ'որոշուին նաեւ հարիւրապետներ եւ յիւնապետներ:

25 Յուլիս 1897ի առաւօտեան, հայ մարտիկներ կ'երդնուն Դաշնակցութեան դրօշակին առջեւ, Գրիգոր Քհնյ. Աւագեանի օրհնութեամբ, որ նոյնպէս խումբի անդամ է, կ'ուղղուին դէպի Մագրիկ ցեղին վրանները տեղադրուած Խանասոր կոչուած վայրը: Կռիւի ընթացքին կը նահատակուին 20 հայեր, վիրաւորները՝ 8 հոգի: Հակառակ որ Շարաֆ Բէկ կը յաջողի կնոջական հագուստներով ծպտուած փախչիլ, ֆեոտայիներու նախադրած ծրագիրը՝ վրէժխնդրութիւնը 800 անմեղ զոհերու մահուան կ'իրագործուի:

Այս տարի, 26 Յուլիսին, 111 տարիներ անց այս պատմական դէպքէն, խումբ մը հայեր Սոֆիայէն, Հ.Մ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղէն Հայ Նորագոյն Պատմութիւն ակումբէն, ձեռնարկեցին ճամբորդութեան մը մինչեւ Պուլկարիոյ Պաթաք քաղաքը, նշելու համար հայոց պատմութեան այս յիշատակելի թուականը: Այս ուխտագնացութեան կազմակերպիչը եւ առաջնորդը եղաւ եղբ. Խորէն Քիրագեան, երկարամեայ վարիչ Հ.Մ.Ը.Մ.ի, հանրային ծանօթ գործիչը: Ձեռնարկին մասնակցութեան հրաւէր ուղղուեցաւ գրեթէ բոլոր հայրենակիցներու եւ ի մեծ անակնկալ մեզի՝ անոր ընդառաջեցին նաեւ մեր ազգակիցները Սթարա Չակորայէն, որոնք Պաթաք հասած էին մեզմէ առաջ: Ինչպէս միշտ, այս անգամ ալ ներկայ էր Թագուհի Մանիկեանը, Սթարո Չակորայի «Երեւան»ի

նախագահուհին:

Ինչո՞ւ որոշուեցաւ յիշատակութեան հաւաքը կատարել Պաթաքի մէջ, որովհետեւ Պուլկարիոյ այս քաղաքի բնակչու- թիւնը 19րդ դարուն նախճիրի ենթարկուեցաւ Օսմանեան մո- լեզնութեան, տարով հազարաւոր անմեղ զոհեր: Եւ որովհե- տեւ հոն, այդ ոսկրեայ դամբարանին գետեղուած էին գլխատ- ւած պաթաքցիներու աճիւնները, որոնց վրայ գետեղուած խաչքարը ծածկուած էր ծաղիկներով, նուիրուած՝ «Յաւակից հայ ժողովուրդէն ի յիշատակ նահատակուած պաթաքցիներ- րուն, 1876ին»: Օրուան կարգախօսը եղաւ «Երկու ժողովուրդ, մէկ ճակատագիր»:

Խանասորի արշաւանքին մասին խօսեցաւ Վարդանոյշ Թոփաքպաշեան՝ գլխաւոր խմբագիր «Երեւան» շաբաթա- թերթի եւ նախագահ Սոֆիայի կազմակերպութիւններու հա- մագրիչ խորհուրդին: Բանախօսուհին վերջիչեց պատմական դէպքերը, նշելով որ պատմական արժէքներու եւ ազգային յի- շողութեան փոխանակումը ճակատագրական է ժողովուրդի մը համար: «Հայր Մեր»ով եւ հոգեհանգիստի արարողու- թեամբ Գոուսան Քհնյ. Հատակեան, հոգեւոր առաջնորդը մայ- րաքաղաքի հայութեան, վերջիչեց Օսմանեան վայրագ սպան- դը Պաթաքի բնակչութեան, Վանի մէջ նահատակուած 800 հայերու եւ Խանասորի արշաւանքին հերոսաբար ինկած մար- տիկներուն: Տէր հայրը այս առթիւ արտասանեց պուլկար բա- նաստեղծ Իվան Վազոֆի «Քոչօ» ոտանաւորէն հատուած մը՝

«Մոռցուածներու դիւցազներգութիւն» եղերերգութենէն, ինչպէս նաեւ՝ Փենչօ Սլավէյքօֆի յօրինած «120»ը, իսկ Համբօ Փափագեան կատարեց Խանասորի արշաւանքին նուիրուած ստեղծագործութիւն մը:

Խաչքարին առջեւ հաւաքուածները ծաղիկներ գետեղեցին, ի յարգանս անմեղ զոհերու յիշատակին: Մեխակներ (նուիր- ւած Խորէն Մանուէլեանի կողմէ) փոխանցուեցան եւ գե- տեղուեցան դամբարանին առջեւ: Խումբէն փափաքողներ այցելեցին Պաթաքի ազգագրական թանգարանը, տեղույն եկեղեցիին մէջ մոմեր վառեցին, որմէ յետոյ ճամբորդեցին «Յիկով շաք» շրջանը:

Հրաշալի եղանակը եւ հաճելի կացութիւնը Պաթաք ջրամ- բարին քով թոյլ տուին, որ մասնակիցները ոգեւորուին բնու- թեան մէջ, Ռոտոփիի գեղեցկութիւններով, նաւարկելով ջրամբարին վրայ:

Վերադարձին, խումբը այցելեց Վելինկրատ: Աւելորդ է ըսել, որ դժգոհներ չկային: Աւելին, առաջին ճամբորդութենէն ետք՝ Ռիլայի վանք եւ Քիրիլովայի դաշտ, այս երկրորդը լաւ անդրադարձ ունեցաւ Սոֆիայի հայու- թեան վրայ, որովհետեւ ան մէկտեղեց հաճելին եւ օգտակարը: Զեռնարկը իրագործուեցաւ շնորհիւ Ռամելա եւ Կարօ Կեմճեան ընտանիքի նուիրատուութեան, որուն շնորհիւ կա- րելի եղաւ հոգալ հանրակառքով կատարուած ճամբորդու- թեան ծախսերուն մէկ մասը:



*Hratch and Neshan Boyadjian*

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811  
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon  
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



*Ազգասիրութեան ամենէն կարեւոր գործերէն մէկն է սիրել անոնք որոնք օր մը ազգին նայուածքները, յոյսերը, ակնկալութիւնները իրենց վրայ պիտի կեդրոնացնեն, ամէն հայ տղու եւ ամէն ծնողքի համար մեր ստեղծած նոր շարժումը - Հայ Պոյ Սկաւուտներու շարժումը - հաւատքի չափ նուիրական պէտք է ըլլայ, որովհետեւ ան հիմնուած է ազգասիրութեան եւ բարոյականութեան առաջնորդող գաղափարներուն վրայ:*

*Մեր երդումը շատ կարճ ու պարզ պիտի ըլլայ, հրաւերը ազգային է, որովհետեւ յառաջ գալիք բարիքը ազգային պիտի ըլլայ. այդ երդումը կը պարտադրէ «Պատուոյ վրայ երդնուլ ազգին ու հայրենիքին որեւէ կերպով օգտակար ըլլալ»:* Այս երդումը գիտակցօրէն կ'ընեն, այս երդումին տակ կը ստորագրեն ու ձեգի կ'ըսեն. պիտի չուզէի՞ք ինձի պէս ընել:

**ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆ**

# ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆ

**Ո՛չ դափնեկիր մը, ո՛չ ալ մարզական շարժման ռահվիրայ մը, նախակարապետ մը: Արդարեւ, ո՛չ մէկ մրցանիշ իր անունով եւ ոչ ալ մեր մէջ մարզական շարժման ստեղծիչ մը: Կար այդ շարժումը իր նորածիլ վիճակին մէջ: Շաւարշ Զրիսեանի արժէքն ու մեծութիւնը կը կայանան այդ շարժման էութեան գիտակցութեան, անոր տարածման, համակարգման եւ Հայ Մարմնամարզական Միութեան մը յառաջացման անվիատ տոչորման մէջ:**

1908ի Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն ետք, երբ մեր գրականութեան վրայ հեթանոս շունչ մը կը փչէ Դ. Վարուժանի «Յեթանոս երգեր»ով, «Բագին» եւ «Մեհեան» թերթերու հրատարակութեամբ, Լ. Շանթի «Հին աստուածներ»ով, Ռ. Չարդարեանի «Բագինին փառաբանութիւնը» արձակ բանաստեղծութեամբ, շատ բնական պէտք է նկատուի մարմին մշակման վրայ դրուելիք շեշտը, նոր բառով մը՝ մարմնակրթանքը: Ա՛յն մարմնին, որ դարերով գրեթէ անտեսուած է, ի շահ հոգիին եւ միտքին: Նոր կեցուածքը չ'անտեսեր կամ չի ստորագնահատեր հոգին ու միտքը. ընդհակառակը, կ'ուզէ նոր լծակ մը տալ անոնց ամողջութեան եւ երկարատեւութեան համար, մշակելով եւ կրթելով այն հողերէն անօթը, որուն պարունակեալն են միտքն ու հոգին: Հին յունական իտեալն է, որ կը վերակենդանանայ - ամողջ միտք, ամողջ մարմնի մէջ: Այս շարժման դրօշակիրը կը հանդիսանայ Շաւարշ Զրիսեան, որ 1911ին հիմնելով «Մարմնամարզ» թերթը, կը ջանայ իր իտեալները սփռել նոր զարթօնք մը ապրող մեր ազգին մէջ:

Զրիսեան հազիւ վեց տարուան (1909-1915) մարզական գործունեութեան առիթ ունեցաւ: Յարաբերաբար կարճ շրջան մը, սակայն բախտաւորութիւն է, որ կայ «Մարմնամարզ»ի չորս տարուան հաւաքածոն, որ կը ցոլացնէ իր մտածումներն ու իրագործումները:

Շատ վտիտ են մեզի հասած իր կենսագրութեան վերաբերեալ տեղեկութիւնները: Ծնած է 22 Յուլիս 1886ին, Պոլսոյ Պէշիկթաշ արուարձանին մէջ: Յաջորդաբար յաճախած է Մաքրուհեան, Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյն, Պերպերեան, Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյն, Պերպերեան եւ Ռոպըրթ Զոլէճ

հաստատութիւնները: 1906ին կ'անցնի Փարիզ եւ կը յաճախէ Լիսէ Ժանսոն մարմնամարզական վարժարանը՝ ուսուցիչ ունենալով Տէպոնէ փրոֆեսորը: Հազիւ վեց ամիս հետեւած դասընթացքներուն, կ'անցնի Լոնտոն: Այս տեղափոխման մէջ կրնայ իր դերը ունեցած ըլլալ Ռոպըրթ Զոլէճի ամերիկեան իր կրթութիւնը: Լոնտոնի մէջ կը մնայ երկուքուկէ տարի. կ'աշակերտէ Սանտոմի եւ 1909ին վկայուելով կը վերադառնայ Պոլիս: Կը նուիրուի գլխաւորաբար ուսուցչական ասպարեզի՝ դասաւանդելով մարմնամարզութիւն:

1911ին կը ձեռնարկէ «Մարմնամարզ»ի հրատարակութեան: Յակոբ Ճ. Սիրունի (Ճոլոլեան), ոչ մարզիկ մը, սակայն մարզական շարժման քաջալեր հանդիսացած մտաւորական մը, իր յուշերուն մէջ կը պատմէ, թէ ինք թելադրած է Զրիսեանի՝ լոյս ընծայել նման հրատարակութիւն մը: Կ'ենթադրուի, որ «Նոր Դպրոց»ի հիմնադիր եւ տնօրէն Յովհաննէս Թ. Հինդլեանն ալ մաս ունեցած ըլլայ այս թերթին հիմնադրութեան մէջ, որուն իր գործօն աշխատակցութիւնը չզլացաւ, ըլլա՛յ ինքնագիր յօդուածներով, ըլլա՛յ թարգմանութիւններով:

«Մարմնամարզ»ի Ա. տարին (1911 Փետր. - Նոյ.) կը բաղկանայ 10 թիւէ եւ լոյս տեսած է որպէս պատկերազարդ ամսաթերթ: Բ. տարուան Ա. թիւէն սկսեալ (1912 Յունուար) կը դառնայ պատկերազարդ կիսամսեայ (հանդէս) եւ օրկան ազգային ֆիզիքական վերածնութեան (լոյս տեսած 24 թիւ): 1913 Յունուարին վերստին ամսաթերթի կը վերածուի եւ լոյս կը տեսնէ 12 թիւ: 1914ի սկիզբը, Զրիսեան թիֆոյի երկարատեւ հիւանդութեան պատճառաւ չի կրնար լոյս ընծայել իր թերթը: Չորս ամսուան ակամայ դադարէ մը ետք, Դ. տարուան Ա. թիւը լոյս կը տեսնէ 1914ի Մայիսին<sup>(1)</sup>: Բ. թիւէն ետք կը դադրի (Յունիս):

Ի՞նչ հեռանկարներով կամ առաջադրանքներով լոյս կ'ընծայուէր «Մարմնամարզ»ը: «Առաջին Խօսք» վերնագրով խմբագրականին մէջ Զրիսեան կը յայտնէ. «Այնպէս համոզուած ենք ու պատմական փաստեր ունինք ուրիշներն ալ համոզելու թէ՛ այն ազգերը, որոնք կ'ուզեն իրենց գոյութիւնը ապահովել, բարգաւաճիլ ու զարգանալ, ըլլա՛յ վաճառականութեան, ըլլա՛յ գիտութեանց եւ ուսմանց մէջ, պարտա-



ւոր եւ միտքն ու մարմինը իբր ամբողջ մը նկատելու ըստ այնմ երկուքն ալ հաւասարապէս զարգացընել:

«Մարմնամարզ»ը ինքնավստահութիւն կու տայ եւ նկարագիր, ու եթէ 50 տարի առաջ մեր մէջ ալ մուտք գործած ըլլար կանոնաւոր ֆիզիքական կրթութիւն մը, վստահօրէն այսօր չէինք իբր հայ բնորոշուեր այն յատկութիւններով՝ որոնք մեր առաւելութիւնները նսեմացնելու միայն կը ծառայեն»<sup>(2)</sup>:

Մարզական ակումբներ գոյութիւն ունեին Պոլսոյ եւ Իզմիրի մէջ: Առաջին թիւէն սկսեալ կոչ կ'ուղղէ, որ անոնց թիւը բարձրանայ, ընդգրկելով ւաւելի մեծ թիւով հայ երիտասարդներ, պատրաստակամութիւն յայտնելով տրամադրելու իր թերթին էջերը՝ անոնց իրագործումներուն: Կը պատրաստէ տիպար կանոնագիր մը այդ ակումբներուն համար:

«Մարմնամարզ»ի խմբագրութեան նախաձեռնութեամբ եւ Պոլսոյ հայկական 21 ակումբներու կազմակերպութեամբ, Պոլսոյ մէջ կը կատարուի Հայկական Ողիմպիական: Ա.ը՝ 1911ի Մայիս 1ին, Բ.ը՝ 1912 Մայիսին, Գ.ը՝ 1913ի Յունիսին: Գ. Ողիմպիականին ամէնէն աչքառու եւ հաճելի նորութիւնն էր հայ սկաւտներու ներկայութիւնը: Դ. Ողիմպիականը՝ 1914 Յունիսին: 1912ի Ապրիլին, Բ. Ողիմպիականի նախօրեակին, Զրիսեան խմբագրական ակնարկին մէջ կը գրէ. «Հայ Ողիմպիականը ո՛չ հայ աղքատին, ո՛չ հայ մտաւորականին եւ ո՛չ ալ հայ տգետին համար է, այլ՝ ՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ: ... Գաղափարական բոլոր դրօշներու տակ ապրողներ թող գան տարւոյն մէջ օր մը միանալ գեղեցիկ գաղափարի մը դրօշին տակ, ու ողջագուրուիլ՝ սիրտերնին միեւնոյն զգացումներով բաբախուն:



«Հայ Ողիմպիականը Պոլսոյ մարմնամարզական հաստատութեանց մէկ համախմբումը ըլլալէ պէտք է դադրի. այդ պարագային, անոր արժէքը կը սահմանափակուի, այլ քաջալերուելով ու լաւագոյնս կազմակերպուելով՝ պէտք է վերածուի համայն թուրքոյ Հայոցս եւ անկէ անդին Կովկասի եւ այլ հայաշատ կեդրոններու հայութեան մէկ հաւաքատեղին: Ան պէտք է հին Յունականին նմանի»<sup>(3)</sup>:

1911 Յունիսին կ'առաջարկէ, որ կազմուի Պոլսոյ համար ֆութպոլի հայկական լիկ մը, որովհետեւ 1911 Փետրուարին եթէ հազիւ թէ երկու-երեք ֆութպոլի խումբեր կային, անոնց թիւը 18ի բարձրա-

ցած է եւ հետզհետէ բարձրանալու նշաններ կան: 1914ի սկիզբը վեց ակումբներու մասնակցութեամբ կը կազմուի ֆութպոլի հայկական լիկ մը: Եղածը զինք կը խանդավառէ, սակայն, չի գոհացըներ: Իր իտեալը կը մնայ Պոլսոյ հայ մարմնամարզականը:

Պոլսոյ մէջ ամէն տեղ է: Մարմնակրթանքի ուսուցիչ զանազան դպրոցներու մէջ, նոր ակումբներու ջանադիր՝ զանազան արուարձաններու մէջ, դասընթացքներ եւ դասախօսութիւններ սարքող՝ զանազան սրահներու մէջ: Հայուիներ հետեւելով իր մարմնամարզական դասընթացքին, Ուսումնական Խորհուրդէն կը ստանան համապատասխան վկայական<sup>(4)</sup>:

Խմբագրականներով եւ առանձին յօդուածներով կը շեշտէ անհրաժեշտութիւնը ներմուծելու կամ ընդգրկելու մարմնակրթանքը դպրոցական ուսումնական ծրագիրին մէջ:

Սկաւտական շարժումը մեր մէջ տարածելու հեռանկարով «Մարմնամարզ»ի մէջ լոյս կ'ընծայէ ծրագիր-կանոնագիր մը՝ «Պօյսքաուղը եւ իր կեանքին նպատակը - Հայ պօյ սքաւտներ» խորագիրով, զոր ապա գրքոյկի կը վերածէ: Այս ծրագիր-կանոնագիրին հիմամբ, 1913 Մարտին, Սկիւտարի մէջ կը կազմուի սկաւտական խումբ մը, որ իր մասնակցութիւնը բերելով Գ. Ողիմպիականին, կ'աւելցնէ օրուան հանդիսութեան փայլը:

1912ի ամրան սկիզբը, օգտուելով իր ամառնային արձակուրդէն, կը մեկնի Եգիպտոս: Հասած օրն իսկ ներկայ կ'ըլլայ Աղեքսանդրիոյ Պօղոսեան երկրորդական վարժարանի աշակերտութեան մարմնամարզական հանդէսին: Կը հրճուի իր սիրտը ի տես պարզուած տեսարանին եւ իրագործումներուն:

Այս առիթով կը գրէ.

«Երկու տարի առաջ, երբ «Մարմնամարզ»ը հրատարակելու քաջութիւնը ունեցանք, այն ատեն որո՞ւն մտքէն կ'անցներ թէ շատ քիչ ատենէն հայ աղջիկն ալ, զօրաւոր ճիգով մը թօթափելով զինքը յատկանշող հայ աղջկան յատկութիւններն ու մանաւանդ անշարժութիւնը, օր մը ֆիզիքապէս պիտի շարժեր, իր եղբայրներուն հետեւած մարզանքներուն պիտի մասնակցեր, ու ինչ որ դեռ ւաւելին է, իր շարժումներուն վայելչութեամբը եւ կանոնաւորութեամբը, նոյնիսկ զանոնք պիտի գերազանցեր, ու այսպէս նոր թուական մը պիտի բանար հայ ցեղին ֆիզիքական վերածնութեան այնքան ազնիւ

**Մեր նպատակը պիտի ըլլայ մարդ պատրաստել եւ մարդեր եւ որ մեզի կը պակսին: Մարդուն կեանքը դրամագլուխ մըն է եւ որպիսին պարտի այդ կեանքը բարելաւելով՝ զաւակներուն յանձնել...: Ազգ մը խմբովին, որակի տեսակետով, այնքան կ'արժէ, որքան զինքը կազմող անհատները անջատաբար:**

### **ՇԱԽԱՐԾ ԶՐԻՍԵԱՆ**

**ու նուիրական գործին մէջ: ... Մենք անկարելի տեսութեանց ետեւէն չենք վազեր, այլ հաստատապէս համզուած ենք, թէ ազգեր դարբնելու համար անհրաժեշտ է մայրեր պատրաստել»<sup>(5)</sup>:**

Աղեքսանդրիա գտնուած շրջանին, հետամուտ կ'ըլլայ կազմել մարմնամարզական ակումբ մը: Յատուկ կոչով մը տեղւոյն երիտասարդութիւնը խորհրդակցութեան կը հրաւիրուի: Խօսք կ'ամեն Տոքթ. Ժամկոչեան եւ Շ. Զրիսեան: Ընդհանուր խանդավառութեան մէջ, շուրջ 40 հոգի որպէս գործօն անդամ կ'արձանագրուի տեղւոյն վրայ կազմուած Կամք մարմնամարզական ակումբին:

Զրիսեանի մեծագոյն նպատակն էր յառաջացընել Հայ Մարմնամարզական Միութիւն մը, որ համախմբէր Պոլսոյ եւ գաւառի մարզական բոլոր ակումբները: Կը յառաջացնէ թուականը, օրակարգի հարցեր, սակայն ծրագիրը չ'իրագործուիր:

Տակաւին 30 տարիքը չբոլորած, կենսունակաւորութեամբ, տեսլականներով եւ իր ժողովուրդին ծառայելու պատրաստակամութեամբ լեցուն իր կեանքը վերջ կը գտնէ թուրքին եաթաղանին տակ:

Իր ձերբակալման, քսորին եւ նահատակութեան շուրջ անհրաժեշտ տեղեկութիւնները կը պակսին:

1915 Ապրիլ 24ի չարաշուք գիշերուան ընթացքին, առաջին ձերբակալուածներուն մէջ է: Արամ Անտոնեան երբ կ'առաջնորդուի Պոլսոյ Կեդր. Բանտը, դաշնակցականներու խմբակին մէջ կը յիշատակէ Շ. Զրիսեանի անունը՝ Ակնունիի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ռ. Չարդարեանի եւ այլոց կողքին:

200է աւելի հոգիներ մտաւորականներու խումբը Հայտարար Փաշայի կայարանէն շոգեկառքով ճամբայ կ'ելլէ: Շոգեկառքը կ'անցնի Նիկոմիդիա, Պիլէճիկ, Եսկիշեհի քաղաքները եւ Եսկիւրիէն (Անգարա) երկու կայարան առաջ կանգ կ'ամեն: Հոսկէ կը բաժնուին Այաշի քաղաքավայրը ուղարկուելիք անձերը, որոնց մէջ է Շ. Զրիսեան: Կառքերով կը տարուին Այաշ, ուր կը հասնին Ապրիլ 27ի երե-

կոյեան մօտ: Կը բանտարկուին զօրանցին մէջ: Այաշի բանտարկեալներէն ոմանք պատերուն վրայ ձգած են արձանագրութիւններ: Զրիսեան գրած է հետեւեալը. «Շաւարշ Զրիսեան Ապրիլ 14, 1914»<sup>(6)</sup>: 14 Ապրիլը հին տոմարով է: Նոր տոմարով կ'ըլլայ Ապրիլ 27: Արձանագրած է Այաշ հասնելու թուականը:

Այաշի բանտային կեանքին մասին որոշ տեղեկութիւններ կը փոխանցէ Տոքթ. Անդրանիկ Նագաշեան: Շ. Զրիսեանի մասին կը գրէ. «Ամեն առաւօտ, մարմնամարզի դասընթացք մըն ալ ունէինք:

«Շաւարշ Զրիսեան, այդ կտորիճ եւ վառվռուն տղան, կը կառավարէր մեզ: Երեք կարգի վրայ կը շարուէինք եւ մէ'կ, երկո՛ւ, երե՛ք... շարժումները կ'ընէինք:

«Շաւարշ Զրիսեան կը յանդիմանէր սխալ շարժումներ ընողները, որոնցմէ ամենէն երեւելին Շահրիկեանն էր:

«Շահրիկեան», կը պոռար անդիէն մարմնամարզի դասատուն, եւ կարող իրաւագետը, յանցանքի մէջ բռնուած տղու մը պէս, անմիջապէս ոտքերն ուղղելու կ'աշխատէր»<sup>(7)</sup>:

Ուրիշ Էջի մը մէջ կը գրէ. «Շաւարշ Զրիսեան ներս ու դուրս երթելիկ հրամանատարն էր, տեսակ մը ոստիկանապետ, որուն կը հնազանդէինք ամենքս:

«Այսինչ խումբը նե՛րս.

«Այնինչ խումբը դո՛ւրս», կը պոռար Շաւարշ եւ խումբը դրան առաջ կ'ելլէր»<sup>(8)</sup>:

1915ի Օգոստոսի կիսուն, Այաշի քաղաքականներէն մաս մը կը փոխադրուի Եսկիւրիի (Անգարա) բանտը: Կ'ենթադրուի, որ խմբակին մէջ ըլլայ Շ. Զրիսեան: Խմբակը կը միացնեն Եսկիւրիցի հայերու կարաւանի մը եւ քաղաքէն 4- 5 ժամ հեռու գտնուող ձորի մը մէջ կը սպաննեն բոլորն ալ:

Նահատակուեցաւ Շ. Զրիսեան եւ անմուրագ մեկնեցաւ այս աշխարհէն: Սակայն իր ցանած սերմերը, արգաւանդ հողի վրայ իյնալով, 1918ին ծնունդ տուին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.ի):

(1) Մարմնամարզ, Դ տարի, թ. 1 (1914 Մայիս) էջ 1:

(2) Նոյն, Ա. տարի, թ. 1 (1911 Փետր.), էջ 1-2:

(3) Նոյն, Բ. տարի, թ. 8 (1912 Ապրիլ 15), էջ 122:

(4) Նոյն, Ա. տարի, թ. 7 (1911 Օգ.), էջ 223:

(5) Նոյն, Բ. տարի, թ. 14 (1912 Յուլիս 12), էջ 248-249:

(6) Յակոբ Սարգիսեան, Հայկաշէն տարեգիրք, Ա. տարի, 1922, Կ. Պոլիս, էջ 323:

(7) Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1969, էջ 33:

(8) Նոյն, էջ 38:

Ապրիլեան ահարկու փոթորիկէն գոհ մըն ալ:

Շաւարշ, ինք ալ փոթորիկի մարդ՝ իրեն համար կեանքը շարժում եւ վազք կը նշանակէր:

Շատեր գինք կը շփոթեն աթլէթի կամ ֆութպոլիստի հետ. ա՛ն ոչ մին էր, ոչ ալ միւսը, իր նշանաբանն էր առողջ մարմնի միջոցաւ՝ առողջ միտք: Մարզական շարժումի միջոցաւ կը ձգտէր ՅԱՄԱՅԱՅԱԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՄԸ իրականացնել:

Իր ընկերներն էին մղած գինք մարզական ճիւղի. ի բնէ եռուն-շարժում երիտասարդ՝ իր ասպարէզը գտած էր, տատամտում չունեցաւ ան, այլ կրցաւ իրեն եղած թելադրանքին լայնութիւնն ու խորութիւնը ըմբռնել: Նետուեցաւ ասպարէզ գիտակցութեամբ եւ լաւատեսութեամբ:

Երբ ինք հրապարակ եկաւ իբր մարզանքի ուսուցիչ. Պոլսոյ վարժարաններուն մէջ, իր ուշադրութենէն չվրիպեցան գաւառի մարզական անջատ խումբերը. բոլորին հետ էր ան՝ առանց կողմնակալութեան:

Իր շրջապատը նեղ կու գար իրեն, ըլլալով լայն դաշտի մարդ իր ուժերը ընդարձակ ասպարէզի պէտք ունէին, այս նպատակով հիմնեց առաջին մարզական թերթը - ես իրեն պիտի տամ այս գործին նախաձեռնութիւնը, հոգ չէ թէ բարեկամներ թելադրած ըլլան զայն իրեն, ինք գիտցաւ այդ թելադրութիւնը գործնականացնել եւ հիմնաւորել:

«Մարմնամարզ» թերթը տարածուելով ամբողջ հայ գաղութներուն մէջ՝ նոր աւիշ մը ներարկեց հայ երիտասարդութեան, իր շուրջ հաւաքեց բոլորը: Այս թերթին ազդեցութեամբ էր, որ պահանջք դարձաւ մեր մէջ ֆիզիքական դաստիարակութեան խնդիրը: Սկսան կազմուիլ մարզական



խմբակցութիւններ, գրեթէ բոլոր հայաշատ գաւառներու մէջ, եւ մարմին առաւ ցեղապահական նոր ու յուսադրիչ ազդակ մը:

Ինչպէս ըսինք, Շաւարշ ոչ աթլէթ էր եւ ոչ ալ ֆութպոլիստ: Ան մեծ կարեւորութիւն կու տար շուտական մարզանքի, որ բոլոր մարզական ճիւղերու հիմն է եւ ֆիզիքական համաչափ զարգացումի ու առողջութեան մեծագոյն ազդակներէն մին կը նկատուի տակաւին մինչեւ այսօր: Սակայն, Շաւարշին գործին կարեւորութիւնն ու մեծութիւնը կը կայանայ, մինչեւ այսօր հաճոյքի կամ ժամանցի իմաստով առնուած գործի մը կենսական եւ համազգային հանգամանք տալուն մէջ:

Կարողացէք իր խմբագրականները, որոնց մէջ մասնագիտական ոչինչ կայ, այլ ընդհակառակը, հայ երիտասարդութիւնը մարզանքի միջոցաւ կ'առաջնորդուի ազգային-քաղաքացիական գիտակցութեան, որոնց մէջ շատ գեղեցիկ ծրագիրներ կան

ազգապահպանման տեսակետով: ՅԱՄԱՅԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ ՄԸ հիմնելու, ձեւաւորելու երկունք մը կը տեսնուի այդ տողերուն մէջ:

Միշտ գաղափարի փոխանակութիւններ ունէր իր մօտիկ ընկերներուն հետ, որոնք շատ լաւ կը հասկնային այդ ջրուտ հայորդիին փոթորկումները եւ թիկունք կը հանդիսանային անոր՝ նիւթապէս եւ բարոյապէս, քանի որ իրենց իտեալներն էին միեւնոյն ատեն:

Եւ հասունցած էր գաղափարը, ձեւ եւ մարմին առնելու մօտ էր՝ երբ պայթեցաւ համաշխարհային աղէտը եւ Շաւարշ ձեռք առաւ Գողգոթայի ճամբան, այնքան ուրիշ թանկագին ընկերներու հետ:

Գնաց խիստ լաւատես, կարծես արշաւի, պտոյտի կ'երթար եւ իր քսորի կեանքին մէջ իսկ ան վայրկեան մը չլքեց իր սիրած գործը. միշտ կառչած էր իտեալին, երբ դահիճը գործադրեց տրուած վճիռ-հրամանը:

Շիջեցաւ ինք, սակայն բոցավառեցաւ իր սիրած գործը, քանի մը տարի ետք Յ.Ս.Ը.Մ. անունին տակ, աւելի ընդլայնուած եւ աւելի բարձր տեսլականով:

Հայ մարմնակրթական կեանքին մէջ Շաւարշ Զրիսեանի անունը յաւերժացած է. այդ անունը գամուած է այս շարժումին գմբէթին վրայ շողարձակ աստղի մը պէս:

Պատի՛ւ եւ յարգանք իր չմոռցըող յիշատակին:

### ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆԸ

«Հայ Սկսուտ» պաշտօնաթերթ  
Հ. Ս. Ը. Մ.ի, Գ. Տարի, Թիւ 6,  
Ապրիլ 1930:

# ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՇԱՒԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆԷՆ

Շաւարշ Քրիստեանի մտածումները եւ գաղափարները լաւապէս կ'արտացոլան «Մարմնամարզ»ի էջերէն, զոր ան հրատարակեց 1911-1914:

«Մարմնամարզ»ը եղաւ այն հիմնաքարը, որուն վրայ կառուցուեցաւ հայ մարզական եւ սկաուտական շէնքը: Այսօր երբ կը թղթատենք «Մարմնամարզ»ի էջերը, հիացմունքով կը տեսնենք Շաւարշ Քրիստեանի եւ իր գործակիցներուն քաջութիւնը, հեռատեսութիւնը եւ հաւատքը նոր կազմաւորուող սկաուտական եւ մարզական շարժումներուն հանդէպ:

Մասնաւորաբար այնտեղ կը գտնենք Քրիստեանի եւ գործակիցներուն ազգային հարցերու առողջ մօտեցումը, որ կը ձգտի նոր սերունդի հոգեկան եւ մարմնական դաստիարակութեան:

Ահաւասիկ երկու գրութիւններ՝ քաղուած «Մարմնամարզ»ի էջերէն:

Առաջինը «Մարմնամարզ»ի առաջին թիւի խմբագրականն է, որ թէեւ խմբագրութիւն ստորագրութիւնը կը կրէ, սակայն Շաւարշ Քրիստեանի գրիչն է եւ կը պարզէ անոր ամբողջ հաւատամքը:

Երկրորդը ՇԱ. ԶԷ. ստորագրուած, նոյնպէս Քրիստեանի գրիչն է եւ կ'անդրադառնայ իզական սեռի դաստիարակութեան անհրաժեշտութեան:

## ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ

Այնպէս համոզուած ենք ու պատմական փաստեր ունինք ուրիշներն ալ համոզելու, թէ այն ազգերը որոնք կ'ուզեն իրենց գոյութիւնը ապահովել, բարգաւաճիլ ու զարգանալ, ըլլայ վաճառականութեան, ըլլայ գիտութեանց եւ ուսմանց մէջ, պարտաւոր են միտքն ու մարմինը իբր ամբողջ մը նկատել ու ըստ այնմ երկուքն ալ հաւասարապէս զարգացնել:

Սահմանադրութենէն ասդին զանազան թերթեր մանաւանդ պարբերականներ հրատարակուեցան. ատոնցմէ շատերուն անունն անգամ մոռցած ենք. ու իրենց չկարենալ շարունակելը շատ բնական էր, որովհետեւ տարբեր անուններու տակ գրեթէ նոյն նիւթի մը կրկնութիւնն էին եւ ուրիշ ոչինչ:

Մենք տակաւին ոչ մէկ թերթ տեսանք որ մեր նորմալ կեանքին մէջ կրթիչ նորութիւն մը մտցնելու նկրտեր, ցաւով կ'ըսենք թէ տակաւին դաստիարակութեան համար այնքա՛ն կարեւոր ու ազգի մը ապագային մասին այնքա՛ն անհրաժեշտ մանկավարժական թերթի մը հրատարակութիւնը չտեսանք:

Բայց ցաւիլն ու լալը չեն բաւեր: Ու այսօր, թրջահայ գրականութեան մէջ մեծ պակաս մը գո-

ցելու համար, ձեռնարկած ենք հրատարակել ներկայ ամսաթերթը, որուն գլխաւոր ու գրեթէ միակ նպատակը պիտի ըլլայ հայերէն գիտցողներուն հասկցնել թէ ամէն բանէ առաջ մարդ կենդանի մըն է, ու պարտաւոր է իբր բանաւոր էակ, իր ունեցածը, այսինքն մարմինը ինքնաւել եւ բարելաւել:

Մարմնամարզը ինքնավստահութիւն կու տայ եւ նկարագիր կը շինէ, ու եթէ 50 տարի առաջ մեր մէջ ալ մուտք գտած ըլլար կանոնաւոր ֆիզիքական կրթութիւն մը, վստահօրէն այսօր չէինք իբր հայ բնորոշուեր այն յատկութիւններով, որոնք մեր առաւելութիւնները նսեմացնելու կը ծառայէին:

Թերթիս ուղղութիւնը պիտի ըլլայ ամսէ ամիս, իսկ պահանջներու զարգանալու պարագային ամիսը երկու անգամ հրատարակուելով տալ այն բոլոր ծանօթութիւններն ու տեղեկութիւնները, որոնց գիտակցութեամբ եւ գործադրութեամբ միայն կարելի է առողջ ու երջանիկ ապրիլ:

Շատ լաւ համոզուած ըլլալով որ մարդ այնքան կ'արժէ մտաւորապէս որքան ֆիզիքապէս ու փոխադարձաբար, մեր այս ձեռնարկը յաջողցնելու համար ապահոված ենք մեր մէջ դժբախտաբար շատ ցանցառ թիւով գոյութիւն ունեցող մանկավարժներուն մասնակցութիւնը. ու միեւնոյն ատեն շատ լաւ ալ գիտնալով որ մանկավարժ մը առանց բժիշկի եւ բնախօսի օգնութեան կարող չէ մանուկը



կրթել եւ մարդ ընել, ապահոված ենք ծանօթ բժիշկներու եւ բնախօսներու օժանդակութիւնը: Մէկ խօսքով մեր նպատակը պիտի ըլլայ մարդ պատրաստել եւ մարդեր են որ մեզի կը պակսին:

Աւելորդ կը համարենք մանրամասնութեանց մէջ մտնել. թերթի մը պարունակութիւնը կը ցուցնէ իր ուղղութիւնը եւ նպատակը. միայն կ'ուզենք աւելցնել թէ հետզհետէ նախաձեռնարկ պիտի ըլլանք կամ մղում պիտի տանք ամէն թաղի ու գաւառի մէջ, մեր կարողութեան չափով մարմնակեր-

թանքի միութիւններ հաստատելու ու այսպէսով երիտասարդութիւնը բարոյական անկումներէ հեռացնելով, յունական եւ ողիմպիական խաղերու վերածնութեան պէս, հայկական ֆիզիքական կրթութիւն մը ստեղծել:

Ու ճամբայ կ'ելլենք:

**ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ**

**«Մարմնամարզ» Ա. տարի, թիւ 1, Փետրուար 1911:**

## ԿԻՆԵՐԸ ԵՒ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԸ

Այր մը կրթելը միայն մարդ մը պատրաստել է, իսկ կին մը կրթելը ամբողջ սերունդներ պատրաստել է, եւ ապագայ սերունդներուն, այսինքն ազգի մը ապագան մեծագոյն մասամբ կախում ունի օրիորդներէ, որոնք օր մը պարտաւորուած ըլլալով ամուսիններ եւ մայրեր ըլլալ, բնական է իբր այն ծանր պարտականութիւններ ունին, զորս չափտի կրնան պէտք եղածին պէս կատարել, եթէ չունին առողջ մարմին մը, պայծառ միտք մը եւ մաքուր հոգի մը:

Բացի կազմախօսական ու ատոր բնական հետեւանք եղող բնախօսական տարբերութիւններէ, որեւէ տարբերութիւն չկայ այրերուն եւ կիներուն միջեւ, եւ ինչ բան որ օգտակար է մէկուն, օգտակար է միւսին, ինչ որ վնասական էր առաջինին, վնասակար է նաեւ երկրորդին:

Մէկ խօսքով, այրն ու կինը ապրող կեանքի մը երկու տարբեր ձեւերն են, ու երբ անգամ մը համոզուած ենք կամ համոզուիմք թէ ֆիզիքական կրթութիւնը օգտակար կամ անհրաժեշտ է այրերուն, կարծեմ որեւէ տրամաբանական պատճառ մը չունինք հակառակը կարծելու կիներու մասին, հարկաւ այդ կազմական եւ բնախօսական տարբերութիւններուն եւ կեանքի մէջ իրենց ունենալիք դերին եւ կոչումին համեմատ մարզանքի ձեւին ալ փոփոխումը մասնաւորապէս նկատի ունենալով:

Ինչպէս ամէն տեղ, մեր մէջ ալ կրթութիւնն ու դաստիարակութիւնը դպրոցէն կը սկսի: Մեր հոգեբանութեան ու մանկավարժութեան մասին ունեցած «հմտութիւնը» ցոյց տալու համար շատ անգամ մեքենաբար կը կրկնենք թէ մանչերն ու աղջիկները իրարու հաւասար են, բայց երբ խնդիրը խօսքէն գործնականի կու գայ, ամէնքս ալ չենք ուզեր բան մը ընել:

Այսօր ջանքեր, - թէեւ մինչեւ հիմա խօսքեր միայն, - կ'ըլլան լրջօրէն նկատի առնելու կեանքի չափ անհրաժեշտ խնդիր մը, որպիսին է կրթական հարցը, բայց դժբախտաբար իգական սեռը՝ մարդոց ընկերը ըլլալու սահմանուած այդ բնական կե-

սը պէտք եղածին պէս նկատի չէ առնուած, ու այսօր ցաւալի է ըսել, աղջկանց վարժարաններու եւ իրենց վիճակին բարելաւման համար որեւէ ջանք չէ եղած, այլ ամէն բան կ'ընենք կամ ընել կը կարծենք երբ մեր ամբողջ ուշադրութեան եւ խնամքին առարկան կ'ընենք միայն մանչերը:

Ինչպէս մանչերուն, նոյնպէս եւ աղջիկներուն համար դպրոցը նպատակ մը չէ, դպրոցը միջոց մըն է որ կեանքի մը կը պատրաստէ եւ կիներուն համար այդ կեանքը ընկերուհիի եւ մօր վսեմ եւ բարձր պաշտօնն է:

Ըսինք թէ՛ նպատակ մը չէ, այլ միջոց մը, բայց պէտք չէ միայն քանի մը լեզուներ, դաշնակ, երգ, պար քիչ մը կարդալ-գրել սորվեցնող միջոց մը եւ միջավայր մը ըլլայ, այլ պէտք է դպրոցը իր կրթիչ դերին մէջ միայն մնալով պատրաստէ կազմով եւ միտքով, որով եւ բարոյականով առողջ օրիորդներ, որոնք առանց շուարելու, առանց դեղեւելու ընթանան այն ճամբէն, որուն մօտաւոր նպատակը երջանիկ է, իսկ հեռաւոր նպատակն ալ ազգի մը գոյութիւնը ապահովել եւ զայն բարգաւաճել է:

Եթէ իրօք կինը բան մը չ'արժէր, որեւէ դեր չունի սերունդի մը յառաջ գալուն որով եւ ազգի մը պահպանման մէջ, ու դարձեալ եթէ կինը կարող չէ այր մարդուն չափ եւ անոր պէս խորհելու եւ տրամաբանելու, եւ եթէ իր պաշտօնը միայն մայր ըլլալ է, առանց նկատի ունենալու թէ ի՞նչ տեսակ ընկերուհի մը, ի՞նչ տեսակ մայր մը, եւ որպիսի՞ զաւակներու մայր մըն է, այլեւս ի՞նչ պէտք կայ աղջկանց վարժարաններ բանալով աւելորդ ծախքերու ենթարկուիլ:

Բայց երբ այդ ամէն ձեւակերպութիւնները կը կատարենք նկատել տալ ուզելով թէ կիներն ալ մարդ են, ինչո՞ւ չենք կրնար կամ չենք ուզեր գիտնալ թէ կիներն ալ ճիշդ այրերուն չափ մարդ են, ու այդ երկու տարբեր տեսակ մարդերուն միացումով կազմուելիք միութեան ճիշդ կեսն են. ոչ աւելի, ոչ պակաս: Կը հետեւի թէ կիները այրերուն հաւասար են ու պէտք է այս պարագան նկատի ունենալով՝

պետք եղած կարեւորութիւնը ընծայուի իրենց կրթութեան:

Տեսնենք թէ հիմա ի՞նչ եղած են աղջկանց վարժարանները. թողունք հիմա մտաւորականը՝ առնենք միայն ֆիզիքական մասը:

Երբ աղջկանց մասին ֆիզիքական կրթութեան զանցառութիւնը դիտել կու տանք, շատ լաւ գիտենք թէ նոյնիսկ մանչերու վարժարաններուն մէջ տակաւին մարմնամարզը իբր զարդ մը նկատուած է, ու այդ մարմնամարզի յատկացեալ ժամը կարելի չէր աւելի «արդիւնաւորապէս» գործածել Տիրացիութեան դաս մը սահմանելով: Անձնական փորձառութեան յիշատակներէս է որ կը խօսիմ, գէթ վարժարանին մէջ մանչերը կրնան վազել, ցատկել, պոռալ, մէկ բառով քիչ մը անառակութիւն ընել, - որովհետեւ մեր մէջ տղուն հետ միասին ծնող շարժումը անառակութիւն նկատուած է ու անշարժութիւնն ալ խելօքութիւն, եւ առաջինին վարձատրութիւնը եղած է պատիժ, իսկ երկրորդինը լաւ վարքի նիշեր, բայց աղջիկներուն այդ անառակութիւնն ալ մասամբ արգիւլուած է, այն նկատումով թէ աղջկան մը ամօթ է մանչու մը պէս վազել, ցատկել, անոնց նմանիլ, իսկ անոնք որոնք չեն կրնար իրենց մէջ ծածկել շարժումներու մասին ունեցած բնածին հակումնին, մանչ-աղջիկ կը յորջորջուին:

Ու այսպէս տարիները կ'անցնին, ու օրիորդը նոյնիսկ ոտանաւոր գրել կը փորձէ, բայց այդ տարիները անցնելուն եւ ոտանաւորի յանգ մը գտնելու զոհուած ճիգերուն եւ յոգնութիւններուն հետ անզգալաբար օրիորդին ողնայարն ալ կը սկսի ծռիլ, աչքերուն տեսութիւնը նուազիլ, ուսերը դէպի առաջ գալ, մէջքը դէպի առաջ ծռիլ, ուսերէն մէկը վեր բարձրանալ եւայլն:

Եթէ կը կարծէք թէ շատ մութ գոյներով կը ներկայացնեմ աղջկան մը վարժարանական կեանքը, բաղդատեցէք վարժարան չտեսած գիւղացի աղջկան մը եւ վարժարանի մէջ մեծցած քաղքենի աղջկան մը կազմուածքները, պիտի զարմանաք, ու պիտի համոզուիք թէ ներկայ պայմաններով դպրոցը փոխանակ շինելու, կը քանդէ:

Եւ գեղեցիկ օր մըն ալ, այդ օրիորդները ընդհանրապէս իրենց ձեռքը թխմուած աւարտական ճառերը կ'արտասանեն, քանի մը ձեռք կը համբուրեն, վկայականնին կ'ամեն եւ դպրոցէն մեկնելով մտած ըլլան կը կարծեն կեանքի մը մէջ, առանց այդ կեանքին մէջ ունենալիք դերին մասին գաղափար մը ունենալու:

Այլեւս կեանքի մէջ են:

Եթէ տակաւին իրենց յոգնած մարմիններուն մէջ աշխատելու կարող միտք մը գոյութիւն ունի, անմիջապէս կը նետուին վէպերու անվերջանալի ընթերցումներու աշխարհին մէջ եւ շատ անգամ իրենց իսկ ձեռքով ու իրենց ծնողքին աչքին տակ կ'ըլլան մէյմէկ ջղայիններ, ինքզինքնուն հաւնող-

ներ, մէկ խօսքով անիրականալի խտեւներու սիրահարներ

...Չարկաւ դեմքին գեղեցկութիւնը շատ բան կ'արժէ, բայց այդ տարբեր խնդիր մըն է:

Դպրոցը, որ պարտաւոր էր ամէն բան ընել կանացի այդ դանդաղ այլաստումը արգիլելու համար, առանց գիտնալու աւելի նպաստած է, ու այդ կը պարտինք դպրոցին դերը պետք եղածին պէս ըմբռնած չըլլալուս:

Ամէն անիրաւուած որեւէ ձեռով մը կ'ուզէ իր վրէժը լուծել, բայց պետք է յուսալ թէ հայ կիները պիտի չուզեն իրենց մասին գործուած սխալներուն, նոյնիսկ չարիքներուն վրէժը լուծել իրենց զանակներէն, իրենց սերունդէն, մէկ խօսքով իրենց ազգէն:

...Գուցէ շատ կիներ կ'ուզեն մարգանք ընել, բայց կը վախնան որ երիկմարդոց պէս խոշոր ու կաղապարուած կաշըմբումն ղնդերներ ունենալով բան մը կը կորսնցնեն կինը յատկանշող իրենց քնքշութենէն, սրբութենէն. այդ դիտողութիւնը ու վախը շատ իրաւացի է, բայց սխալ է. սխալ է կարծել թէ կիները կարող են երիկմարդոց պէս դնդերային արտաքին երեւոյթ մը ունենալ, ու յետոյ, մարգանքի ձեւերն ու փորձերը նոյնը չեն, բոլորովին տարբեր են, մարմնամարզը կիներուն կու տայ առողջութիւն, մարմնական գիծերու սրբութիւն եւ գեղեցկութիւն, կինը ներքնապէս պետք է ուժեղ ըլլայ, հոգիի ուժ ունենայ, որպէսզի կարող ըլլայ կեանքի մէջ իրեն բաժին ինկած երկու տեսակ սնուցանումները լաւ կատարել, քանի որ առջի (ներքին) ու ետքի (մանկան կաթ տալ) դիեցումները շատ աւելի տաժանելի ու երկայն են՝ քան այդ դիեցումներուն տեղի տուող պատճառը. ու այդ իսկ պատճառէն աւելի կենսատու ուժերու ամբարման պետք ունի:

Վերջացնելէ առաջ պարտք կը համարեմ կրկնել թէ ինծի համար երբեք երազ մը չէ յուսալ թէ ասկէ 45-50 տարիէն մենք ալ պիտի ունենանք հայ օրիորդներ եւ կիներ, որոնք իրենց նուրբ այլ ճկուն ու համաչափօրէն զարգացած հասակով ու իրենց շարժումներուն վայելչութեամբը կարող պիտի ըլլան մրցիլ այնքան շատ խօսուած շուէտուհիներու, անգլուհիներու եւ ուրիշներու հետ, որոնց մայրերը ասկից 50 տարի առաջ հաւանաբար այն էին ինչ որ են այսօր Չայու Կնիկները մեր մէջ: Ու ա՛յդ՝ մարմնամարզը պիտի ընէ:

Բառերը փափկանկատութեան համար վերցնելով չէ որ իրողութիւնները գոյութիւն ունենալէ կը դադրին, այլ պետք է իրողութիւնները վերցնել, որով եւ բառերու պետք չի մնար:

**ՇՍ. ԶԷ.**

*(հատուած)*

**«Մարմնամարզ» Ա. տարի, թիւ 1, Փետրուար 1911:**



Փակման հանդիսութեան ներկայ սկաուտներ եւ շեփորախումբի անդամներ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԻՋ-ՄԱՄՆԱԾԻԴԱՅԻՆ 18ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

## Թղթակից ՇԻՔԱԿՕ

**Հ**ՄԸՄԻ Արեւելեան Միացեալ Նահանգներու միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերը տեղի ունեցան 3-6 Յուլիս 2008ին, նախաձեռնութեամբ՝ ՀՄԸՄ-ի տեղւոյն Շրջանային Վարչութեան, հովանաւորութեամբ՝ Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օչական Արք. Չոլոյեանի, ներկայութեամբ՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանի եւ հիւրընկալութեամբ՝ ՀՄԸՄ-ի Շիքակոյի մասնաճիւղին:

Իլինոյի «Հովերու քաղաք»ին մէջ կազմակերպուած այս խաղերուն մասնակցեցան 9 մասնաճիւղեր՝ Ֆլորիտա, Տիքսոն, Պոսթըն, Փրովիտա, Նիւ Եորք, Նիւ Ճըրզի, Ուաշինկթըն, Ֆիլադելֆիա եւ Շիքակո: Մասնակցութիւն բերաւ նաեւ Գանատայի շրջանէն Թորոնթոյի մասնաճիւղը:

Բոլոր մարզիկները եւ սկաուտները, Չորեքշաբթի, 2 Յուլիսին սկսեալ, խումբ առ խումբ ժամանեցին «Hyatt O'hare» պանդոկ, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերու պատասխանատուներու կարճ ժողով մը, բացատրելու համար շաբաթա-

վերջի մարզախաղերու դասաւորումը, օրէնքները եւ կարգապահական պայմանները:

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Խաղերու պաշտօնական բացումը տեղի ունեցաւ դրօշակի յատուկ արարողութեամբ, ներկայութեամբ շրջանի հոգեւոր հովիւ՝ Զարեհ Ա. Քհնյ. Սահակեանի, Շրջանային Վարչութեան անդամներու, Շրջանային մարզական յանձնախումբին, կազմակերպիչ մասնաճիւղի վարչութեան եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ներկայացուցիչներուն:

### ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

ՀՄԸՄ-ի տարեկան այս մարզախաղերը առիթ մըն են սատարելու միութեան վսեմ նպատակին, երբ շրջանի մասնաճիւղերէն, եւ հիւրաբար Գանատայէն ժամանած ՀՄԸՄ-ականներ, ՀՄԸՄ-ի շունչով եւ ոգիով գօտեպնդուած, կը հաւաքուին միջ-մասնաճիւղային խաղերու դրօշին տակ, մրցելու հայկական ազնիւ ոգիով, ստեղծելու խանդավառ մթնոլորտ, ծառայելու «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, միշտ ի մտի ունենալով, որ խաղերէն յաղթական դուրս պիտի դայ ՀՄԸՄ-ը:

Մօտաւորապէս հինգ հարիւր մարզիկ-մարզիկուհիներ,



Պոսթընի եւ Ուաշինգթոնի մասնաճիւղերու կրտսեր աղջկանց ֆութպոլի խումբերը:

ծիլ, փոքր, կրտսեր, երէց եւ դասակարգերով, իրենց մասնակցութիւնը բերին այս տարուան մարզախաղերուն, որոնց կարգին էին ֆութպոլ, պասքեթպոլ, վոլեյպոլ, աթլետիզմ, լողարշաւ եւ այլն: Մրցումները տեղի ունեցան Կլէնվիլու երկրորդական վարժարանի դաշտերուն մէջ:

Անհատական թէ՛ խմբային մարզախաղերուն մասնակցեցան 56 խումբեր եւ 492 մարզիկներ: Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկ-մարզիկուհիները մարզական ոգիով կատարեցին բոլոր մրցումները, վայելելով Շիքսկոյի մասնաճիւղի սրտբաց հիւրասիրութիւնը: Տեղին է յիշել խաղերու կազմակերպիչ յանձնախումբին տարած անձնուէր աշխատանքը, որ արժանացաւ բոլորին գնահատանքին:

Փակման հանդիսութեան ընթացքին, դրօշակակիրներու առաջնորդութեամբ տողանցեցին մարզախաղերու մասնակից մասնաճիւղերէն արի-արենոյճներու, արծուիկներու եւ գայլիկներու խումբեր, եւ յաջորդաբար մարզախաղերու մասնակից մարզիկները: Յատուկ խանդավառութիւն ստեղծեց խաղերու կազմակերպիչ յանձնախումբի եւ օժանդակ յանձնախումբերու անդամներուն մոլտքը, որոնք արժանացան ներկաներուն յոտնկայս ծափողջոյններուն:

Կէսօրէ ետք, միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերը փակուեցան տողանցքով: Յաջորդեց ախոյեան խումբերու բաժակներու բաշխումը: Այս տարի, առաջին անգամ ըլլալով, նկատի առնուած էր լաւագոյն բարելաւում արձանագրող մասնաճիւղի յուշանուէր:

Այս տարուան տրտոգոսակիրն էր Ֆլորիտայի մասնաճիւղը, որ յուշանուէրը ստացաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեարոպեանէն:

Շրջանային մարզական խաղերու թեքնիք պատասխանատու եղբ. Վարուժան Ճինտոյեան առաւելագոյն կէտ հաւաքած Պոսթընի մասնաճիւղին փոխանցեց «Նոյ-



Պոսթընի մասնաճիւղի պասքեթպոլի աղջկանց խումբը:

եան» բաժակը: Լաւագոյն մարզիկ հանդիսացաւ Արմինէ Կաւուր, որ բաժակը ստացաւ իր մեծ հօրմէ՝ Սանի Կաւուրէն:

Այսպէս, երեք օր միասնաբար Հ.Մ.Ը.Մ-ականներ ընթացան ղէպի հաւատքի, սիրոյ եւ միասնականութեան պայծառ ուղիին հորիզոնները, առաջնորդուեցան մարզակերտ ու հայակերտ նուիրական նոյն արժէքներով, որոնք իրենց նահատակներէն ու հիմնադիրներէն փոխանցուած այն եզակի ժառանգն ու կտակն են, որ պիտի լուսաւորեն իրենց եւ ներկայի, եւ գալիքի ճամբան:

**ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ**

Յաղթանակի ճաշկերոյթ պարահանդէսը տեղի ունեցաւ մարզիկները հիւրընկալած պանդոկին շքեղ սրահներէն մէկուն մէջ: Պաշտօնական բաժինը բացուեցաւ պատուոյ հիւրերու մոլտքով: Ներկայ էին հազարէ աւելի Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ համակիրներ, որոնք ապրեցան յիշատակելի երեկոյ մը Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին հետ: Պատուոյ սեղանին վրայ ներկայ էին Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթին

Տէլլըմէնճեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեարոպեան եւ այլ հիւրեր:

Օրուան հանդիսավարն էր Մարալ Վարդանեան: Գեղարուեստական յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ

Ֆլորիտայի մասնաճիւղի ներկայացուցիչները Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեարոպեանէն կը ստանձնեն լաւագոյն բարելաւում արձանագրած մասնաճիւղի յուշանուէրը:

Համազգայինի Շիքակոյի պարախուժմբը:

Հիւրընկալ մասնաճիւղի ատենապետ եղբ. Գօգօ Փափազեան խօսք առնելով բարի գալուստ յայտնեց եւ մասնակցողներուն յաջողութիւն մաղթեց:

Ապա խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մերոպեան, որ գնահատանքի խօսք ուղղեց բոլոր անդամ անդամուհիներուն, որոնք աներեր կամքով ու անսահման գոհողութեամբ նուիրուած են Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն վառած ջահը անմար պահելու գործին եւ իրենց բոլոր կարողութիւնները ի սպաս դրած են առողջ ու հայեցի դիմագիծի տէր սերունդ մը պատրաստելու աշխատանքին: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց խաղերը հիւրընկալող Շիքակոյի մասնաճիւղին եւ բոլոր անոնց, որոնք նպաստեցին այս տարուան միջ-մասնաճիւղային խաղերու յաջողութեան:



Շիքակոյի մասնաճիւղի վոլիպոլի խումբը:

Իր խօսքին սկիզբը, եղբ. Մերոպեան ըսաւ. «90 տարիներ շարունակ մեր ժողովուրդի արգանդէն ծնած այս մեծ կազմակերպութիւնը ո՛չ միայն հաւատարիմ մնաց իր հիմնադիրներու տեսլականին, այլ՝ այդ տեսլականին ամուր կառչած մնալով, ժամանակին հետ քայլ պահեց ու հայրենագործիկ հայ սերունդներուն ջամբեց ազգային գիտակցութիւն, անոր մէջ սերմանեց հաւատարիմ հայու, վեհանձն, կարգապահ ու ազնիւ մարդու բոլոր նախադրեալները...Այս հրաշալի կազմակերպութեան իբրեւ մէկ մասնիկ, Արեւելեան շրջանը կը ջանայ իր լաւագոյնը մատուցել ու նորահաս սերունդի դաստիարակութեան ընդհանուր գործին իր անուրանալի ներդրումը ունենալ: Եւ ահա այս առաքելութեան շրջագիծին մէջ այսօր կը վայելենք մեր փոքրիկներուն ու երիտասարդներուն մասնակցութեամբ կատարուած միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերու հրճուանքը: Շարունակելով, եղբ. Մերոպեան հաստատեց, որ «Այս խաղերը սովորական մրցաշարք մը չեն, ուր կ'արձանագրուին յաղթողներ ու պարտուողներ, այլ անկէ անդին՝ նպատակ ունին Հ.Մ.Ը.Մ.ափայլ ազնիւ մրցակցութեան մթնոլորտի մէջ քով-քովի գալու, նախկին ծանօթութիւններ ամրապնդելու եւ նոր ծանօթութիւններ հաստատելու, որոնք ի վերջոյ կը նպաստեն մեր հաւաքական կամքի ամրապնդման, մէկս միւսով հզօրանալով՝ իւրաքանչիւրս աւելի կը գօտեպնդուի Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական գաղափարներով եւ վերանորոգուած կորովով կը վերադառնանք մեր շրջանները՝ շարունակելու համար մեր գործն ու ծառայութիւնը՝ ի ինդիր ազգային գիտակցութեան պահպանման, ազգասիրութեան ու հայրենասիրութեան, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ընդմէջէն ծառայելու մեր համայնքի կարիքներուն, հայրենիքի հզօրութեան ու զարգացման»:

Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Արթին Տէյրիմէնճեան անդրադարձաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան շրջանի միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերը կը գու-

զադիպին այս մեծ ընտանիքի հիմնադրութեան 90ամեակին: Ան իր խօսքին մէջ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի հաստատաքայլ երթը շրջանին մէջ եւ յայտնեց, որ Հ.Յ. Դանակցութիւնը ամբողջ աշխարհի տարածքին եւ յատկապէս այս շրջանին մէջ թիկունք է Հ.Մ.Ը.Մ.ին, մանաւանդ երբ անիկա դժուարութիւններ կը դիմագրաւէ: Ան աւելցուց. «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր հիմնադրութենէն ի վեր յամառօրէն կը պայքարի կերտելու համար տիպար ու մաքրամաքուր մարդը, հայը, մարզիկն ու սկաուտը:

Հ.Մ.Ը.Մ.ը ծառայութեան հաւատարիմ միութիւն է, ծառայութեան ծնունդ է եւ ինք՝ իբրեւ կերտիչ, ինչպէս նաեւ համեստ ու խոնարհ ծառայողներու համախմբում, կը ծառայէ իր անսակարկ ու ոսկետառ նշանաբանին ներքեւ...Այս կազմակերպութիւնը Հայաստանի անկախութեամբ ստեղծուած պատեհութեան արձագանգելով՝ իր ծառայութեան աշխարհագրական դաշտը ընդարձակեց ու իր խնամքին ու հոգատարութեան առարկայ դարձուց ոչ միայն հայրենաբնակ երիտասարդը, այլ նաեւ՝ Զաւախքի, Արցախի եւ ի սփիւռս աշխարհի հայտղիները»:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան իր կարգին յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ պատմութիւնը հարուստ եղած է բացառիկ սխրագործութիւններով, իսկ միութեանական կեանքը՝ յիշատակելի ձեռքբերումներով: «Թէեւ 90ամեայ պատմութիւն ունինք, սակայն կը մնանք երիտասարդ: Այսպէս է նաեւ մեր ներկան ու ապագան: Միշտ վճռակամութեամբ եւ խոր հաւատքով պիտի շարունակենք Հ.Մ.Ը.Մ.ի երթը: Անուան խորհուրդին հարազատ, Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ արժանագոյնին արձագանգը: Անկասկած, որ դժուար է երեւակայել սփիւռքահայութիւնը, առանց Հ.Մ.Ը.Մ.ին: Պատմակերտ հիմնադիրները իրենց աննահանջ հաւատքով եւ հայափայլ վճռականութեամբ հիմը դրին հայ պատանիին ու երիտասարդին հոգին, միտքը եւ մարմինը կերտող մեծ դպրոցին եւ յղացան մեր նշանաբանը՝ «Բարձրա-



Նիւ Ընդդէմի մասնաճիւղի պատգեթպօղի խումբը:

ցիւր-բարձրացուր»ը, որ ինքնին գերակշիւ իմաստ ունի, այսինքն՝ իր անձէն առաջ եւ իր անձէն ետք, իր նմանին ծառայելու նուիրական ոգին ու յանձնառութիւնը, ամբողջական հաւատարմութիւնը»:

Ազգային Առաջնորդարանի ան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի 90 ամեակը եւ յայտնեց որ այս տօնախմբութեամբ հայու-թիւնը կ'անմահանայ:

Եղբ. Դանիէլեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորեց միջ-մասնաճիւղային մարզախաղերու կազմակերպիչ մարմինները, յանձնախումբերը, մասնակից մարզիկներն ու համակիրները, եւ մաղթեց որ բոլոր ձեռնարկները պսակուին փայլուն յաջողութեամբ:

Վերջին խօսքը արտասանեց Արեւելեան Միացեալ Նահանգներու Առաջնորդ Օշական Արք. Չորոյեան: Սրբազանը իր խօսքը երիտասարդութեան ուղղելով, շնորհաւորեց միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերու յաջողութիւնը եւ յիշեցուց որ զանազան կազմակերպութիւններն եկած ու զացած են, բայց Հ.Մ.Ը.Մ.ը 28 Մայիս 1918ի պայքարէն ու մեր ժողովուրդի ծոցէն ծնած, կը մնայ միշտ երիտասարդ: Ապա, ան շեշտեց, որ այս օտար ափերուն վրայ այս կազմակերպութիւնը կը մնայ հայ ազգի սեփականութիւնը եւ այսօր անոր դրօշը կը ծածանի աշխարհի բոլոր ծագերուն: Յանուն




- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan 32-38, Hanrabedoutian Street, Yerevan 375010, Armenia Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50 sales@europehotel.am



www.europehotel.am



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ ՅՅՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ԿԸ ՊՍԱԿՈՒԻ ՓԱՅԼՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Մարտ Բեյրութի  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Շաբաթ, 28 Յուլիս 2008ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ականներով ողողուեցաւ «CBS Studio Center»ը, ուր աննախընթաց յաջողութեամբ իրագործուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Նաւասարդեան ՅՅրդ Մարզախաղերու յաղթանակները գովերգող պարահանդէսը, աւելի քան 700 մասնակիցներով:



«Հզօրացած է ծառայութիւններովն ու գոհողութիւններովը յաջորդական երեք եւ ներկայիս չորրորդ սերունդներով: ... Հոս՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ օրհնուած ենք ունենալով մարզիկներ եւ սկաուտներ, մարզիչներ եւ առաջնորդներ, որոնք լաւագոյն աւանդոյթն են մեր անցեալի արչաւին»:

Ապա, եղբայրը հաստատեց, թէ՛ ակնարկուած սերունդները շարունակութիւնն են մեր անցեալի

Նաւասարդեան յաղթանակները յատկանշող բացառիկ այս ձեռնարկով Հ.Մ.Ը.Մ. իր արմատները աւելիով ամրապնդեց Միացեալ Նահանգներու հեռաւոր, բայց հիւրընկալ փոքրուն:

Յաղթանակի պարահանդէսին գլխաւոր հովանաւորն էր «Վաքովիա» դրամատունը:

Երեկոյեան ժամը 7-8 տեղի ունեցած հիւրասիրութեանէն ետք, ներկաները առաջնորդուեցան իրենց տեղերը, ուր ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին անունով զանոնք ողջունեց եղբ. Շանթ Հայթայեան եւ ներկաները հրաւիրեց յոտնկայս ունկնդրելու Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդները, որոնց յաջորդեց սեղաններու օրհնութիւնը թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց Բաֆֆի Համբարեան, որ Հ.Մ.Ը.Մ.ի հովիւները նկարագրելով ըսաւ. «Այսօր կը պատուենք Հ.Մ.Ը.Մ.ը: Մենք յանձնառութեան տակ կը մտնենք Հ.Մ.Ը.Մ.ի համար: Նուիրում կը ցուցաբերենք մեր աւանդութիւններուն եւ հասարակաց ապագային, որոնք կեդրոնացած են Հ.Մ.Ը.Մ.ի հոգիին մէջ: Կազմակերպութիւն մը, որ արմատաւորուած է մեր ազգի խորագոյն արժէքներուն մէջ: Հզօրացած է անցեալի ինը տասնամեակներուն ընթացքին:

պատմութեան, որ ծանօթ է ցաւով ու տառապանքով, վերապրումով, յաջողութեամբ եւ միշտ առաջ ընթացած է բարձրանալով եւ բարձրացնելով իր շրջապատը:

«Բարձրացի՛ր-բարձրացու՛ր: Իւրաքանչիւրդ, ձեր անհատական ձեւով կը պայքարիք Աւարայրի ձեր անձնական ճակատամարտը: Պատրաստ, մի՛շտ պատրաստ՝ կրելու ծանր բեռը, պահպանելու մեր ինքնութիւնը, պաշտպանելու մեր կեանքը, զօրացնելու մեր Հ.Մ.Ը.Մ.ը, միջազգային հովիւը հայ երիտասարդութեան: Պայքարը դիւրին չէ եղած, սակայն պատմութեան ընդմէջէն նայած՝ միշտ գտած ենք զօրութիւնը մեր համայնքին եւ զօրութիւնը մեր կազմակերպութեանց»:

Հանդիսավար Համբարեան բարի գալուստ մաղթելով ներկաներուն գոհունակութեամբ մատնանչեց, թէ՛ բոլորս բարեւի կը կանգնինք այն եզակի կազմակերպութեան, որ ծնունդ առաւ իր ժողովուրդէն՝ ծառայելու համար իր ժողովուրդին:

Այնուհետեւ, ան ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Կոմիտաս ՔՏՆյ. Թորոսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան, Ծերակուտական Պրէտ Երրմըն, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմի-



տէի ներկայացուցիչ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Յակոբ Թիւֆէնքեան, Քալիֆորնիոյ Նահանգային Խորհուրդի անդամներ Անթրնի Փորթոնչիսո եւ Փօլ Գրիգորեան, Միացեալ Հայկական Ֆոնտի տնօրէն Յարութ Սասունեան, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի քարտուղար Արտաշէս Քացախեան, ՀՕՄի եւ Համազգայինի Շրջանային Վարչութեանց ներկայացուցիչներ, Հայ Դատի յանձնախումբի անդամներ, քաղաքի դատաւորի թեկնածու Մայքըլ Ամիրեան, Վերահսկիչ Մայք Անթոնովիչի ներկայացուցիչ Ռիթա Հաճիմանուկեան, Նաւասարդեան մարզախաղերու անցեալի պատուոյ նախագահներ, «տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, հովանաւորներ եւ բազմաթիւ հիւրեր: Ակնյայտ էր երիտասարդութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ական նորահաս սերունդի ներկայութիւնը:



2008ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Ալպէր Ունճեան եւ Նաւասարդեան 33րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններ իրենց դստեր՝ Սուէին հետ:

Եղբոր տպաւորիչ արտայայտութեանց յաջողեց ցուցադրութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի կամաւոր աշխատանք տանող քոյր-եղբայրներուն եւ Նաւասարդեան 33րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններուն նուիրուած տեսերիզի մը, ուր ցոյց տրուեցաւ, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ական սկսուտ խմբապետը, մարզիկ-մարզիչը եւ յատկապէս ծնողքը, իրենց առօրեայ աշխատանքներուն առընթեր, մեծ գոհողութիւններով կամաւոր աշխատանք կը տանին Հ.Մ.Ը.Մ.ական սերունդներու դաստիարակութեան համար:

Գեղեցիկ այս տեսերիզին ներկայացումէն ետք տեղի ունեցաւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական-2008» տիտղոսին արժանացած եղբ. Ալպէր Ունճեանի ներկայացումը, որուն միութեանական բեղուն գործունէութիւնը ներկաներուն սեփականութիւնը դարձուց Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Յովիկ Պետեւեան, հաստատելով, թէ «Եղբոր երկար տարիներու ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ.էն ներս, արդէն իսկական հայելին է տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի մը արժանիքներուն»:

Ապա ան բեմ հրաւիրեց եւ Շրջանային Վարչութեան անունով յատուկ յուշատախտակով մը պարգեւատրեց եղբ. Ունճեանը, տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ին ունեցած իր մեծ ներդրումին, միութեանական օրինակելի կեցուածքին եւ անվերապահ նուիրումին համար:

Պարգեւատրուելէ ետք, սրտի իր խօսքը փոխանցեց պարգեւատրեալ եղբ. Ունճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած պատիւին համար, ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր դերը երիտասարդութեան դաստիարակութեան մէջ եւ ըսաւ. «Երախտապարտ եմ այս արժեւորման համար: Փոքր

տարիքէս անդամակցած եմ Հ.Մ.Ը.Մ.ին եւ հաւատքով ծառայած եմ անոր շարքերուն, այն հաստատ համոզումով, որ Հ.Մ.Ը.Մ.ը լաւագոյն միջոցն է ծառայելու ազգիս ու հայրենիքիս: Այս մէկը հրապարակաւ նաեւ յայտարարած եմ, սկսուտական իմ երդումիս մէջ: Համոզուած եմ, որ այն հայր որ հաւատքով կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին, յաւիտեանական Հ.Մ.Ը.Մ.ական կը մնայ: Ծնած եմ Հ.Մ.Ը.Մ.ական եւ հպարտանքով պիտի մեռնիմ Հ.Մ.Ը.Մ.ական, միշտ պատրաստ՝ կատարելու պարտականութիւններս ազգիս ու հայրենիքիս հանդէպ»:

Եղբոր տպաւորիչ արտայայտութենէն ետք Րաֆֆի Համբարեան ներկայացուց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանը եւ բեմ հրաւիրեց զայն փոխանցելու Շրջանային Վարչութեան պատգամը: Եղբ. Արթինեան առաջին հերթին անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծման պայմաններուն, աշխարհի ամբողջ տարածքին արձանագրած յաջողութիւններուն, որուն անբաժան մասն է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը եւ ըսաւ. «Հինգ ցամաքամասերու վրայ գործող տասնեակ հազարաւոր իր անդամներով եւ միլիոնաւոր համակիրներով Հ.Մ.Ը.Մ.ը անգին է: 300է աւելի մարզական խումբեր, 4000 երիտասարդ մարզիկ-մարզիկուհիներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան Նաւասարդեան մարզախաղերուն: Ապա, եղբ. Արթինեան վստահեցուց, որ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ը եթէ միջոցները ունենար, իր անդամներուն թիւը ութ հազարէն շատ աւելին կրնար ըլլալ:

«Այս տարի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40ամեակն է: Ժամանակը եկած է աւելի մեծնալու, լուծումներ գտնելու, ընդարձակելու մեր սահմանները: Մեր կազմակերպութեան ապագան մեր երիտասարդութեան ձեռքն է եւ այդ երիտասարդութիւնը ներգրաւելու համար պէտք է հզօրացնել, զարգացնել եւ բարձրացնել գանձը»:

Եղբայրը հպարտութեամբ ծանօթացուց Հ.Մ.Ը.Մ.ի գլխաւոր նուիրատուներէն Լինսի Հիմնարկութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի կտակարար հանգուցեալ Երուանդ Միսեանը եւ ուրիշներ, որոնց նուիրատուութեանց շնորհիւ կարելի եղած էր սեփականացնել 25 էքզըր [շուրջ 100 հազար քառ. մեթր-«Մ.»] տարածութեամբ Թեքոյայի բանակավայրը, որուն վրայ աւելի քան 600 սկսուտներ այս ամառ շրջանի սկսուտական ընդհանուր բանակումը պիտի կատարեն:

Եղբայրը խրախուսեց ներկաները նաեւ շրջանի նոր կեդրոնը ընդարձակելու եւ արդիականացնելու մանրամասնութիւններով:



Եղբայրը յայտարարեց նաեւ, որ այս տարի Նաւասարդեան մարզախաղերու յաղթանակի բաժակները նուիրուած են հանգուցեալ Հ.Մ.Լ.-Մ.ական եղբ. Փիթըր Նուրեանի յիշատակին եւ այս առիթով բեմ հրաւիրեց հանգուցեալին հայրն ու եղբայրը՝ Գրիգոր եւ Սաքօ Նուրեանները եւ անոնց յանձնեց ակնարկուած բաժակներէն օրինակ մը:



**Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ Առաջնորդ Սրբազանիմ, 2008ի «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ից եւ Նաւասարդեան 33րդ մարզախաղերու պատուոյ ցախազահիմ հետ:**

Այնուհետեւ տեղի ունեցաւ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը յատկանշող մետալներու փոխանակման արարողութիւնը:

Եղբ. Արթիւրեան բեմ հրաւիրեց Նաւասարդեան 32րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետիկեանը, որ պաշտօնապէս փոխանցեց ամբողջ մէկ տարի պատասխանատուութեամբ կատարած իր պարտականութիւնները՝ նորանշանակ պատուոյ նախագահներ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններուն եւ իրենց դստեր՝ Սօսէին, որոնք արժանացան ներկաներու երկարաշունչ ծափողոյններուն:

Օրուան հանդիսավար Բաֆֆի Համբարեանի հաստատումով՝ «Վահագնը եւ Պայծառը իրենց դստեր Սօսէին հետ կը ներկայացնեն լաւ ընտանիք մը, հայկական ընտանիք մը, Հ.Մ.Լ.Մ.ական ընտանիք մը»:

Պատուոյ նախագահութիւնը պաշտօնապէս ստանձնելէ ետք, սրտի իր խօսքը սահուն հայերէնով փոխանցեց Պայծառ Թովմասեան, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք իրենց ընծայուած պատիւին համար, անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ.ի ստեղծման տուն տուող պատճառներուն՝ ըսելով. «Սումբ մը կամաւոր նուիրեալներ, ունենալով «Բարձրացիր-բարձրացուր»ը իբրեւ նշանաբան, ուխտեցին իրենց բոլոր կարողութիւնները ի գործ դնել, հաւաքել մեր ժողովուրդի բեկորները, կաղապարել զանոնք կամաւորական անձնուէր կազմի մը մէջ, որպէսզի ծառայեն ազգային վերածննդեան այդ վեհ գաղափարին: ... Այսօր, 90 տարիներ վերջ եւ տարուէ տարի վերանորոգուած աւելով Հ.Մ.Լ.Մ.ի կամաւոր բանակը պարծանքն է իր ժողովուրդին»:

Քոյրը ընդգծելով Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան կարեւորութիւնը հայկական մեր իրականութենէն ներս, կոչ ըրաւ ներկաներուն արձանագրելու իրենց զաւակները Հ.Մ.Լ.Մ.ի շարքերուն, որպէսզի անոնց «Մատղաշ հոգիները դաստիարակւին հայկական մաքրամաքուր, վսեմ գաղափարներով: Թող իրենց մարմինները մարզուին ժամանակի յարմար ֆիզիքական կարողութիւններով, թող զարգանայ եւ բարգաւաճի Հ.Մ.Լ.Մ.ը:

« Այսօր ուսանողներին այս պայմաններուն մէջ յարատեւելու, զարգանալու եւ զարգացնելու եւ իր երթը շարունակելու համար, Հ.Մ.Լ.Մ.ը մեր բոլորին աջակցութեան կարիքը ունի: Եկէք անյապաղ տէր կանգնիք մեր այս հսկային: Եթէ մեր նախնիները այդ բոլոր դժուարութիւնները կարողացան դիմազրուակել եւ իրենց զոհողութեամբ պահպանեցին եւ այսօրուան փառքին տիրացած Հ.Մ.Լ.Մ.ը մեզի ժառանգեցին, այսօր, մենք իրաւունքը չունինք անտարբեր մնալու մեր ազգային ժառանգին՝ Հ.Մ.Լ.Մ.ին հանդէպ: «Այսօր, մենք զգալով Հ.Մ.Լ.Մ.ին մեզ տրամադրած անսահման բարիքները եւ աննկարագրելի առաքինութիւնները, հոգեկան բարձր գոհունակութեամբ եւ երախտագիտութեան խոր զգացումներով եւ պարտականութեան բարձր գիտակցութեամբ կը ստանձնենք Հ.Մ.Լ.Մ.ի Նաւասարդեան 33րդ Մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը, որպէսզի նախ Հ.Մ.Լ.Մ.ին հանդէպ մեր պարտականութիւնը կատարենք եւ Հ.Մ.Լ.Մ.ը տեսնենք բարգաւաճ եւ հզօր»:

Եզրակացնելով, քոյրը անգամ եւս կոչ ուղղեց բոլորին, անյապաղ օգնութեան ձեռք երկարելու իրենց զաւակներուն մարմնակիրութեան եւ հոգիները ազնուացնող այս դարբնոցին՝ Հ.Մ.Լ.Մ.ին: «Պէտք է ժամանակին հետ քայլ պահենք եւ Հ.Մ.Լ.Մ.ը հասցնենք այնպիսի մակարդակի մը, որ ան իր հետաքրքրական նորութիւններով, նիւթական մնայուն աղբիւրներով եւ արդիական միջոցներով ներգրաւէ երիտասարդութիւնը, ընդգրկէ եւ զանոնք պահէ իր իսկ ստեղծած առողջ միջավայրին մէջ:

«Հ.Մ.Լ.Մ.ը մեր բոլորին գուրգուրանքին կարիքը ունի եւ մենք ձեռք օգնութեամբ պատրաստ ենք մեր սէրն ու գուրգուրանքը ցուցաբերելու անոր, որպէսզի ան գոյատեւէ եւ մեր ազգին ապագան նկատուող երիտասարդութիւնը պահէ իր շարքերէն ներս», հաստատեց քոյր Պայծառ Թովմասեան:

Սօր սրտառուչ պատգամէն ետք, խօսք առաւ փոքրիկն Սօսէ Թովմասեան, հիացմունք պատճառելով բոլորին: Ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Լ.Մ.ին եւ իր ծնողքին՝ ըսելով. «Շնորհակալ եմ Հ.Մ.Լ.Մ., որ մեզի ընտրեցիք Նաւասարդեանի պատուոյ նախագահ: Շնորհակալութիւն ծնողքիս, որ ինձի արձանագրեց Հ.Մ.Լ.Մ.ին եւ ընկերներս բերաւ Հ.Մ.Լ.Մ.: Շնորհակալութիւն հօրս, որ կը մարզէ պասքեթպոլի իմ խումբս: Շնորհակալ եմ Սթիւին, որ զիս կը կոչէ ծնողքին առաջին դուստրը: Ուրախ եմ, որ ուսուցչուհի»

Սօր սրտառուչ պատգամէն ետք, խօսք առաւ փոքրիկն Սօսէ Թովմասեան, հիացմունք պատճառելով բոլորին: Ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Լ.Մ.ին եւ իր ծնողքին՝ ըսելով. «Շնորհակալ եմ Հ.Մ.Լ.Մ., որ մեզի ընտրեցիք Նաւասարդեանի պատուոյ նախագահ: Շնորհակալութիւն ծնողքիս, որ ինձի արձանագրեց Հ.Մ.Լ.Մ.ին եւ ընկերներս բերաւ Հ.Մ.Լ.Մ.: Շնորհակալութիւն հօրս, որ կը մարզէ պասքեթպոլի իմ խումբս: Շնորհակալ եմ Սթիւին, որ զիս կը կոչէ ծնողքին առաջին դուստրը: Ուրախ եմ, որ ուսուցչուհի»



**Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան:**

օրիորդ Կասիան Հ.Մ.Ը.Մ.ի անդամ է: Ես կը սիրեմ Հ.Մ.Ը.Մ.ը»:

Ապա, բեմ հրաւիրուեցաւ ծերակուտական Պրատ Շրքմըն, որ 12 տարիէ ի վեր Սան Ֆեռնանտո Հովիտի շրջանը կը ներկայացնէ Ծերակոյտէն ներս եւ 12 տարիէ կը պայքարի Հաստատանի շրջափակման դէմ եւ լուրջ աշխատանք կը տանի Հայկական Ցեղասպանութեան ճանաչման համար:

Ծերակուտական Շրքմըն իր գոհունակութիւնը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծագոյն եւ բազմամարդ մասնակցութիւն ունեցող աշխատանքը՝ Նաւասարդեան մարզախաղերը կ'իրագործուին Սան Ֆեռնանտո Հովիտի շրջանին մէջ, որ մեծ պատիւ է բոլորին համար: Ան նաեւ ուրախութեամբ պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններուն նուիրեց Սպիտակ Տան վրայ ծածանած ամերիկեան դրօշ մը եւ համապատասխան հաստատագիրը, առ ի զնահատանք իրենց նուիրական աշխատանքին:

Իր պատգամը փոխանցեց նաեւ Վահագն Թովմասեան, որ գուգահեռ մը գծելով 40ամեայ իր եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին, յատկանշական հանգրուան մը նկատեց զանոնք: Հանգրուան մը, որ իրեն մտածել տուաւ իր կեանքին մասին, որ կը ներկայացնէ «Ընտանիք, հաւատք եւ Հ.Մ.Ը.Մ.»:

Իսկ անդրադառնալով համեստ պայմաններով Լոս Անճելըսի մէջ ծնունդ առած շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին եւ իր կեանքին, ան ընդգծեց, թէ շատ բաներ փոխուած են. «Այսօր մենք ունինք բազմամիլիոն տոլար արժող կեղրոն, բանակազոր, հազարաւոր անդամներ, զանազան քաղաքներու մէջ մարզադաշտեր ունենալու ծրագիրներ: Այս բոլորը նոր պատասխանատուութիւններու դիմաց կը դնեն մեզ», նշեց եղբայրը:

«Պատասխանատուութեան գիտակցութիւնն էր, որ զգաց իմ ընտանիքս եւ ընդունեց այս մեծ պատիւը: Պատասխանատուութեան գիտակցութիւնն է, որ կը զգանք իւրաքանչիւրս, իբրեւ կամաւոր աշխատողներ: Մեր ղեկավարներուն պատասխանատուութիւնն է ծրագրել միջոցներ, որպէսզի բարձրացնեն մեզ:

«Յաջորդ մասնաճիւղը մեր պատմութեան մէջ չի կրնար հիմնուիլ անցեալի մեր կամաւորներով: ... Այսօր մեզմէ կը պահանջուի աւելին կատարել, աւելին տալ: Միասին պէտք է ճիշդ միջոց գտնենք զօրակցելու Հ.Մ.Ը.Մ.ին: Մենք պէտք է ճիշդ ծրագիրներով հետաքրքրութիւնը շարժենք մեր երեխաներուն եւ մղենք զանոնք մասնակից դառնալու հայկական փորձառութեան: Մենք պէտք է աղբիւրներ գտնենք նոր սերունդներուն ապահով վայրեր տրամադրելու համար: Եւ վերջապէս, մենք պէտք է ընդունելի ձեւով ներկայանանք, որպէսզի մեզի չճանչցողները մօտենան մեզի: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, ես եւ Պայծառ այս յանձնառութիւնները կ'ընդունինք եւ կը ստանձնենք մեզի վստահուած պարտականութիւնները»:

Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց իրենց ընտանիքներուն, որոնց առաջնորդութեամբ եւ սիրով կրցած են իրականացնել իրենց փափաքները: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան՝ իրենց հանդէպ ունեցած վստահութեան եւ յարգանքին համար: Ներկաներուն եւ բոլոր այն համակիրներուն եւ համայնքին, որոնք թիկունք կը կանգնին Հ.Մ.Ը.Մ.ին:

«Նաւասարդեանի պատուոյ նախագահութեան պատիւը կը պատկանի ո՛չ միայն մեզի, այլ՝ բոլորիս: ... Ան կը պատկանի բոլոր այն սկստուտներուն, որոնք այս Օգոստոսին պիտի բանակին Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրին մէջ: Ան կը պատկանի բոլոր մարզիչներուն, կամաւոր աշխատողներուն, առաջնորդներուն, յանձնախումբերուն, խորհուրդներուն, մասնաճիւղերուն, Շրջանային Նաւասարդեան յանձնախումբերուն: Աւելին, ան կը պատկանի բոլոր անոնց, որոնք կը փափաքին Հ.Մ.Ը.Մ.ը հզօր կազմակերպութեան վերածել», եզրակացուց եղբ. Թովմասեան:

Գեղեցիկ այս արարողութենէն ետք, Շրջանային Վարչութեան ատենապետը յայտարարեց, թէ այս տարուան պատուոյ նախագահները որոշած են Հ.Մ.Ը.Մ.ը յաջորդ մակարդակին բարձրացնել, ստեղծելով «Հաստատանուէր Հիմնադրամ» մը (Endowment Fund), սկսելով զայն հարիւր հազար տոլար արժողութեամբ «կեանքի ապահովագրութեան» ապահովագրով մը, քաջալերելով զայն մէկ միլիոն տոլարի բարձրացնելը:

Եղբայրը նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց «Վաքոյի» դրամատան եւ յատկապէս Լիոնիկ Շիրտրմեանին, որոնք այս հիանալի պարահանդէսը իրականութիւն դարձուցին իրենց հովանաւորութեամբ:

Պաշտօնական յայտագրի աւարտէն ետք, երեկոն խանդավառեցին գաղութի սիրուած երգիչ Վաչէն եւ իր նուագախումբը, որոնք հայկական երգերով եւ շուրջպարերով իմաստաւորեցին եւ վերակենդանացուցին Նաւասարդեան միջնորդը: Ուրախ միջնորդը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր:

Նաւասարդեան նորանոր յաղթանակներ նուաճելու վճռակամութեամբ ներկաները մեկնեցան տուն, յաջորդ օրն իսկ դարձեալ տեսնուելու եւ Նաւասարդեան նոր նուաճումներու ականատեսը դառնալու հաստատակամութեամբ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ



## Թղթակից ՄՈՆԹՐԵԱԼ

**Հ**ՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Մոնթրէալի վարչութեան եւ Սկաուտ խորհուրդին կազմակերպութեամբ, շրջանի սկաուտական միջ-մասնաճիւղային բանակումը տեղի ունեցաւ 19-26 Յունիս 2008ին, «Camp Awacamenj Mino»-ի բանակավայրին մէջ, որ իր յարմարութիւններով մեծապէս օգտակար հանդիսացաւ յայտագրին իրականացման: Շրջանի միջ-մասնաճիւղային բանակումը կը կատարուի չորս տարին անգամ մը: Այս տարի, առաջին անգամ ըլլաով, Մոնթրէալի եւ Թորոնթոյի մասնաճիւղերու կողքին, բանակումին իր մասնակցութիւնը բերաւ Քէմպրիճի մասնաճիւղը: Բանակումին մասնակցեցան 163 անդամներ (ներառեալ սկաուտներ, խմբապետներ եւ պատասխանատուներ): Բանակումին ներ-

կայ գտնուեցաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բարգէն Կարապետեան:

Խմբապետական կազմը նշանակուած էր հետեւեալ ձեւով.- եղբ. Էրիք Արապեան՝ բանակումի ընդհանուր խմբապետ, քոյր Յասմիկ Ծառուկեան՝ աղջկանց բաժնի պատասխանատու, եղբ. Բաֆֆի Ծառուկեան՝ տղոց բաժնի պատասխանատու:

Խումբերը բանակավայր հասան Շաբաթ, 19 Յունիսին, եւ շուտով սկսան աշխատանքի: Երեկոյեան, գրեթէ ամբողջացած էր բանակավայրին սարքաւորումը: Յաջորդ օրերուն, հակառակ օդի աննպաստ պայմաններուն, սկաուտները ցուցաբերեցին քաջութիւն եւ ժուժկալուծիւն, որոշ օրերու տեղացող անձրեւը դիմադրաւելով՝ երգերով, զանազան խաղերով ու արշաւներով: Պատրաստուած յայտագիրը կարելի եղաւ իրագործել գրեթէ ամբողջութեամբ:

Ուրբաթ, 25 Յունիսին, քանի մը տասնեակ ծնողներու կողքին, սկաուտները ուրախութեամբ դիմաւորեցին Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան հաւատարմատար Արման Յակոբեանը, որ ներկայ գտնուեցաւ դրօշակի արարողութեան, ուր պարգուած էին Հայաստանի եւ Արցախի դրօշները, Գանատայի եւ ՀՄԸՄ-ի դրօշներու կողքին: Հաւատարմատարը մասնակցեցաւ նաեւ երեկոյեան ընթրիքին:

Շնորհիւ խմբապետներու պատրաստակամութեան եւ հետապնդումին, կարելի եղաւ օրական դրութեամբ նկարներ զետեղել կայքէջին մէջ, հակառակ այն իրողութեան, որ այս աշխատանքը կատարելու համար խմբապետները ստիպուած էին մօտ մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնուող եւ համացանցի դիւրութիւն ունեցող վայր մը տեղափոխուել: Բանակումին ընթացքին եւ այնուհետեւ այս աշխատանքը մեծապէս զնահատուեցաւ ծնողներուն կողմէ: Արդարեւ, շատ կարճ ժամանակամիջոցի մէջ շուրջ 1300 անձեր այցելեցին





**կայքէջը:**

Վերջին գիշերը տեղի ունեցաւ խարուկահանդէս: Բանակումին փակման դրօշակի արարողութեան ընթացքին երգուեցան քայլերգները եւ վերջապէս՝ «Ցտեսութիւն» երգը, որուն ընթացքին արդէն խոնաւցած էին բոլորին աչքերը:

Վերջապէս հասած էր դժուարին պահը, բաժանումը, որ ընդհանրապէս յուզիչ մթնոլորտի մէջ կ'ըլլայ: Սկառուները իրարմէ բաժնուեցան դեղեցիկ յիշակատակներով, այլ առիթներով դարձեալ հանդիպելու խոստումով:

Այս տարուան միջ-մասնաճիւղային բանակումը նուիրւած էր Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 90ամեակին: 90ամեակի տօնակատարութեան աշխատանքներու ծիրէն ներս, տարեշրջանին ընթացքին տեղի պիտի ունենան պաշտօնական երկու



ձեռնարկներ, Թորոնթոյի մէջ՝ 26 Հոկտեմբերին, իսկ Մոնթրէալի մէջ՝ 15 Նոյեմբերին:

Մեծապէս գնահատելի էր Մոնթրէալի մասնաճիւղի Սկառու-Խորհուրդին տարած աշխատանքը, գլխաւորութեամբ եղբ. Լեոն Արապեանի, որ նոյն ժամանակ ընդհանուր խոհարարապետի պաշտօնը ստանձնած էր, օգնական ունենալով Քէմպրիճի վարչութեան անդամ քոյր Լէոնի Սարմազեանը, որ իր մասնակցութիւնը բե-

րաւ բանակումի ամբողջ տեւողութեան: Մոնթրէալի Սկառու- Խորհուրդի անդամները աւօրեայ այցելութիւններով ապահովեցին սկառուներու բոլոր պէտքերը եւ օգտակար հանդիսացան ընդհանուր աշխատանքին:

with the complements of

# Restaurant Al-Mayass



Տարեկան բանակում  
Այնճար  
2...10/08/2008

# Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ



## Մարիա Չոլաքեան ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

**Հ**ՄԸՄ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի 2007-2008 տարեշրջանի բանակումը տեղի ունեցաւ 3-10 Օգոստոս 2008ին, Այնճարի մէջ, մասնակցութեամբ մասնաճիւղի 200 քոյր-եղբայրներու: Բանակումին թեման էր Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակը եւ «Հայկական է, պատուական է» կարգախօսը:

Կիրակի, 3 Օգոստոսի առաւօտեան ժամը 7ին, երեք փոխադրակառքեր ուղղուեցան բանակավայր՝ փոխադրելով արի-արեւոյճները, երէց-պարմանուհիները եւ խմբապետական կազմը, ընկերակցութեամբ մասնաճիւղի ըՄ-կառուտական Խորհուրդի անդամներուն: Հազիւ բանակավայր հասած՝ սկաուտները մեծ թափով սկսան գործի՝ գոյքերը բանակավայր փոխադրելով եւ վրաններ լարելով: Երեկոյեան անոնք արդէն սկսած էին իրենց ձեռային աշխատանքներուն:

Հինգշաբթի, 7 Օգոստոսին, գայլիկները եւ արծուիկները ուղղուեցան բանակավայր եւ տեղաւորուեցան իրենց համար պատրաստուած վրաններուն մէջ, ապա մասնակցեցան խարուկա-


հանդէսի յատկացուած փորձերուն՝ իրենց լաւագոյնը ներկայացնելու համար, իսկ Շաբաթ, 9 Օգոստոսին, մոկլիները ուղղուեցան բանակավայր՝ մասնակցելու խարուկահանդէսին:

Ամբողջ շաբթուան ընթացքին մաս-

նաճիւղին անդամները կիրարկեցին զուտ սկաուտական աշխատանք՝ ամբողջ տարուան իրենց ստացած գիտելիքները գործադրելով՝ բանակավայր միշտ խանդավառելով, յարատեւ աշխատանքով, զանազան կանչերով, եր-

## ԵՂԲ. ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԶԱՀԼԷԻ 5 ՔԼՄ. ՎԱԶՔԻ ԵՐԿՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Զահլէի քաղաքապետութեան կազմակերպած տարեկան փառատօններու յայտագրին մէջ իր յատուկ տեղը ունի 5 քլմ. երկարութեամբ վազքի մրցումը: Այս տարի, մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 17 Օգոստոս 2008ին, մասնակցութեամբ 1200 մարզիկներու, որոնց մէկ մասը արտասահման բնակող լիբանանցիներ էին (Արժանթինէն, Մ. Նահանգներէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Աւստրալիայէն եւ այլն), որոնք ամառնային իրենց արձակուրդը անցընելու համար Լիբանան կը գտնուէին:



Ինչպէս միշտ, այս մրցումին եւս իր մասնակցութիւնը բերաւ Եղբ. Լեւոն Թաշճեան, ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղը: Ընդհանուր դասաւորման մէջ ան գրաւեց երկրորդ դիրքը, 5 քլմ. երկարութեամբ ճամբան կտրելով 16 վայրկեանէն: Եղբոր մրցանակատուութիւնը կատարեց Զահլէի քաղաքապետ Ասատ Զղէյա, որ բարձր գնահատեց անոր իրագործումը:

Եղբ. Լեւոն Թաշճեան անգամ մը եւս բարձր պահեց Հ.Մ.Ը.Մ.ի անունը:



գերով, պարերով եւ խարուկահանդէսի պատրաստութեան փորձերով:

Հինգշաբթի, գայլիկները եւ արծաիկները բանակավայր հասնելէն ետք, ամբողջ մասնաճիւղը ուղղուեցաւ Այնճարի բերդ եւ ծանօթացաւ բերդի պատ-



մութեան:

Ուրբաթ, արի-արենոյշներն ու երէց-պարմանուհիները ուղղուեցան լողաւազան եւ անցուցին անմոռանալի պահեր:

Յաջորդաբար, բոլոր խումբերը այցելեցին Թաանայէլի ագարակը, ձկնարանը եւ լիճը, յատկապէս գայլիկ-արծաիկներուն համար շատ հետաքրքրական էին մածուն եւ պանիր շինելու հանգրը-



ւանները:

Շաբաթ, 9 Օգոստոսին, մասնաճիւղին 200 քոյր-եղբայրները Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին ընկերակցութեամբ տողանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի Այնճարի ակումբէն մինչեւ բանակավայր. տողանցքին ընկերակցեցան մասնաճիւղի անդամներուն ծնողները, որոնք եկած էին Պէյրութէն:

Մէկ շաբթուան տքնաջան աշխատանքը արժեւորուեցաւ փակման խարուկահանդէսին ընթացքին ներկայացուած զանազան կենդանի պատկերներով, պարերով, կանչերով, գաւեշտներով,

որով, որոնք արժանացան ներկաներու գնահատանքին:

Փակման արարողութեան ընթացքին կարգ մը քոյր-եղբայրներ ստացան իրենց աշխատանքին գնահատականը կատարող յուշանուէրներ, ապա խմբապետական կազմը Սկաուտ. Խորհուրդի աշխատանքներուն իբրեւ գնահատական՝ Սկաուտ. Խորհուրդը պատուեց յուշանուէրով մը:

Պաշտօնական փակման արարողութեան եւ ապա խարուկահանդէսին ներկայ էին Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ, Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, Շրջանային խմբապետութիւնը, մասնաճիւղին վարչութիւնը, եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ նախկին խմբապետներ: Խարուկահանդէսի ընթացքին վարչութեան խօսքը փոխանցեց քոյր Պիանքա Զուլամեան-Ատուրեան, որ բարձր գնահատեց մասնաճիւղին սկաուտ քոյրերը, եղբայրները, խմբապետական կազմը եւ Սկաուտ. Խորհուրդը՝ իրենց տարած անսակարկ եւ անշահախնդիր աշխատանքին համար, որուն շնորհիւ կարելի եղաւ կատարել բանակումը եւ խարուկահանդէսը:

Խարուկահանդէսին աւարտին քոյրերն ու եղբայրները իրարու միացած ձեռքերով երգեցին «Յետսութիւն» երգը, այն յոյսով, որ դարձեալ կը հանդիպին Հոկտեմբերին, մասնաճիւղին 2008-2009 տարեշրջանի վերամուտին:

ՏՂՈՑ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԱՆԱԼԷ ԵՏՔ՝

# ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՏԻՐԱՅԱԲ ԼԻԲԱՆԱՆԻ ՃԱՏՐԱԿԻ ԲԱԺԱԿԻՆ

**Ա**րաբական իր իրագործումներուն կողքին, Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Քնարիկ Մուրատեան Յուլիսին արձանագրեց լիբանանեան նոր իրագործում մը, երբ առաջին անգամ ըլլալով տիրացաւ Լիբանանի ճատրակի բաժակի տիտղոսին:

Բաժակի մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն Լիբանանի ճատրակի առաջին 10 դիրքերը գրաւած վարպետները: Քնարիկ, իբրեւ Լիբանանի տղոց ախոյեանութեան երրորդ դիրքին տիրացած «մանչ-աղջիկ», ճակատեցաւ հանրաժանօթ վարպետներու դէմ եւ արձանագրեց փայլուն արդիւնքներ:

Այսպէս, ան երկու անգամ պարտութեան մատնեց Լիբանանի ախոյեան Ֆայսալ Խէյրալլան: Ան չխնայեց նաեւ Ահմէտ Նաժժարի, որ լիբանանեան ճատրակի լաւագոյն ներկայացուցիչներէն է:

Այս իրագործումէն ամիս մը առաջ, Քնարիկ մասնակցեցաւ ճատրակի Լիբանանի տղոց ախոյեանութեան եւ 6.5 կէտով հանդիսացաւ երրորդ՝ Ֆայսալ Խէյրալլայի (8 կէտ) եւ Ալի Աթուէի ետին (7 կէտ):



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԷՅՐՈՒԹԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆ

**Վ**երջին 16 տարուան ընթացքին 15րդ անգամ ըլլալով, Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի Պէյրուլթի աղջկանց խումբը, անցնող ամառ, տիրացաւ Լիբանանի խմբային ախոյեանութեան տիտղոսին: Իրենց կարգին, տղաքը հանդիսացան երկրորդ: Տղոց պարագային վեցերորդ անգամն էր, որ ախոյեանութիւնը կը վրիպէր իրենցմէ: 1992էն ի վեր անոնք եօթը անգամ հանդիսացած են ախոյեան, երեք անգամ երրորդ եւ հինգ անգամ ալ երկրորդ:

Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց եւ տղոց այս յաջողութիւններուն նախորդեցին փինկ-փոնկի ամառնային բաժակի մրցաշարքի յաջողութիւնները, ուր Հ.Մ.Ը.Մ. տիրացաւ մէկ առաջնութեան, մէկ երկրորդութեան եւ երկու երրորդութեան:

Արդարեւ, եղբ. Աւօ Մունջոյլեան (Հ.Մ.Ը.Մ.-Պէյրուլթ) հանդիսացաւ 18 տարեկանէն վար (1990-1991-1992ի ծնունդ) դասակարգի ախոյեան, երբ աւարտականին 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հիւսէյն Թահմազը (Պարաէմ): Սահակ Փայլեան (Հ.Մ.Ը.Մ.-Պէյրուլթ) հանդիսացաւ երրորդ:

Աղջկանց 12 տարեկանէն վար դասակարգի մրցումներուն (1996ի ծնունդ եւ վեր), Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ շահեցաւ մէկ երկրորդութիւն եւ մէկ երրորդութիւն:

Նինա Մարգարեան հասաւ մինչեւ աւարտական հանգրուան, ուր 3-0 արդիւնքով պարտուեցաւ Փաթրիսիա Հոմսիէն (Քֆարչիմա): Աննա-Մարիա Մարգարեան, որ հանդիսացաւ երրորդ (նոյն դասակարգին մէջ), յաջորդաբար պարտութեան մատնեց Սարա Ֆաթան (3-0), Լարա Մաարուլին (3-0) եւ կիսաւարտականին պարտուեցաւ Փաթրիսիա Հոմսիէն (3-0):



ԲԱՐԵԿԻՐԹ ԸԼԼԱՆՔ

# ՈՒՏԵԼ-ԽՄԵԼ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան  
ՊԵՅՐՈՒԹ



**Ո**ւտել-խմելը որքան դիւրին, նոյնքան ալ դժուար գործ է: Կիրթ պատանին կամ պարմանուհին ճաշի նստելէ առաջ ձեռքերը կը լուայ եւ կարճ աղօթք մը կ'ընէ:

Սեղանին վրայ, պնակին շուրջ, դգալն ու դանակը կը դրուին աջ կողմը, իսկ պատառաքաղը՝ ձախ կողմը: Դիմացը կը դրուի ջուրի գաւաթը: Դգալը եւ պատառաքաղը կը բռնեն աջ ձեռքով, իսկ եթէ հաստատուն բան մը պիտի կտրուի, ինչպէս միս մը օրինակ, պատառաքաղը ձախ ձեռքին կ'անցնի եւ աջով կը բռնուի դանակը:

- Ուտելու գլխաւոր օրէնքներէն պէտք չէ մոռնալ հետեւեալները.-
- Պնակը լեցուր այնքան որ կրնաս ուտել եւ վերջացնել:
- Սեղանին վրայ ուրիշներուն առածին աչք մի տնկեր:
- Ճաշը հրամցնողին մի՛ մոռնար շնորհակալութիւն յայտնել:
- Ապուրը կամ որեւէ տաք կերակուր փչելով կարելի չէ պաղեցնել: Սեղանին վրայ փչելը անքաղաքավարութիւն է:
- Խմելէ առաջ եւ վերջ բերանդ սրբէ:
- Բերանդ գոց ծամէ:
- Իսկ ամէնէն կարեւորը, ինքզինքդ չմոռնաս կերակուրի սեղանին առջեւ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ


## ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ

**1897** ին, շուէտացի Ալֆրէտ Նոպէլ կը հնարէ «Տինամիթ»ը: Այս գիւտը անոր կ'օգնէ, որ ան մեծ հարստութեան տիրանայ: Նոպէլ կը հարստանայ, սակայն շատ շուտ կը զղջայ, որովհետեւ ան կ'անդրադառնայ որ ստեղծած է մահացու գէնք մը:

Իր մահէն ետք, Ալֆրէտ Նոպէլ ժառանգ կը ձգէ մեծ գումար մը եւ կտակով կը խնդրէ, որ այդ գումարով հիմնուի հաստատութիւն մը, որ ամէն տարի գնահատէ անոնք որոնք մեծ ծառայութիւններ կը կատարեն մարդկութեան:



Նոպէլեան հիմնադրամը կը հիմնուի Յունիս 1900ին: Այնուհետեւ, ամէն տարի, Դեկտեմբեր 10ին, Ալֆրէտ Նոպէլի մահուան օրը, հինգ անձեր կը գնահատուին տարբեր մասնագիտութիւններու մէջ իրենց կարեւոր ծառայութիւններուն համար. գրականութիւն, բժշկութիւն, բնագիտութիւն, խաղաղութիւն եւ քիմիագիտութիւն: Հետագային, գնահատանքի մրցանակ մըն ալ կը հաստատուի տնտեսագիտութեան մարզի մեծ ծառայութիւն ունեցողներուն համար:





## ՁԻԱԽՈՐՆԵՐ

Ձիախորներ ենք մենք շատ քաջ,  
 Ձին կը քշենք միշտ յառաջ,  
 Բռնած սանձէն մենք ուժով,  
 Ձայն վարենք ուշի-ուշով:

Յոփ լա լա, լա հոփ լա,  
 Յոփ լա լա լա հոփ, (2)


Յեծած անոր քամակին,  
 Ոտքերնիս ասպանդակին,  
 Խարազան մը ձեռքին աջ,  
 Մենք կը դիմենք միշտ յառաջ:

Յոփ լա լա, լա...

Մեր ձին արագ կը վազէ,  
 Բայց երբ քաշել ալ չուզէ,  
 Խարազանը այսպէս մենք,  
 Օդին մէջ շաչեցնենք:

Յոփ լա լա, լա...

## ՆԵՐԿԻ՛



## ՁԻՆ

Ձիուն լսողութիւնը շատ սուր է: Ան երկրաշարժ մը կը զգայ մարդոցմէ առաջ:

Ձին խոտակեր կենդանի է: Օրական կ'ուտէ 14-16 քկ. եւ կը խմէ 20-40 լիթր: Անոր տարիքը կրնանք գիտնալ ակուսներէն:

Ձին կ'ապրի փարախի մէջ: Անոր ձայնին կ'ըսենք խրխինջ:

**Ձ**ին կը պատկանի ստնա-  
 ւոր կենդանիներու ըն-  
 տանիքին: Ան ընտանի  
 կենդանի մըն է: Կ'օգ-  
 տագործուի երկրա-  
 գործութեան, փոխադրութեան, ձիա-  
 վարութեան եւ մրցակցութեան հա-  
 մար: Ձի մը կը կշռէ շուրջ 500 քկ. եւ  
 կ'ապրի 20-30 տարի: Ան մկաններով  
 հարուստ կենդանի է. ունի 469 մկան:  
 Մենք ընդհանրապէս սրճագոյն եւ սեւ  
 ձիեր կը տեսնենք, կան նաեւ սպիտակ  
 ձիեր, որոնք թիւով աւելի քիչ են եւ  
 շատ աւելի արժէքաւոր:

Ձին կը քալէ սմբակով: Սմբակը  
 կը նմանի մարդու մը եղունգին: Ձին  
 ունի մատներ, բայց մէկ մեծ եղունգ,  
 որ սմբակն է, մատները իրարու միաց-  
 նողը:



դիւ: Նախորդ հանելուկին պատաս-  
 խանն էր կաւ):

## ՀԱՆՏԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:

Աշխարհի բոլոր լեզու-  
 ները կը խօսի, սակայն  
 մարդ չէ:

(Պատասխանը՝ յաջոր-  
 դիւ: Նախորդ հանելուկին պատաս-  
 խանն էր կաւ):





Էլի Ֆուլիշեան

## «ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱՋԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Ս.Ս.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Ջարեհ Գարակիւլեան, Յակոբ Թոքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էիրամճեան, Արթո Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճէթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տէտէեան, Արթին Մաժակեան, Արա Իմամճեան, Պետրոս Պաքըրճեան, Բաբգէն Կարապետեան, Բիւզանդ Լախոյեան, Գառնիկ Նազարէթեան եւ Կարապետ Ն. Թովիճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորճ Տաքետեան:

[www.homenetmen.org](http://www.homenetmen.org)

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Ֆորմիւլա 1»-ի պրագիլացի մրցավարորդ:
2. Սողոմոն Տարօնցիի երկերէն (երկու բառ) - Յուցական ածական:
3. Դրկից տառեր - Որոշուած գին:
4. Հայ անուանի ծովակալ՝ Յովհաննէս (1884-1967) - Տիրան Չրաքեանի գրչանունը:
5. «Ազգապատում»-ի հեղինակ՝ Մաղաքիա արքեպիսկոպոս - Ցայլք:
6. Կոնաբեր ծառ - Հեծել - Օտար աղջիկ:
7. Սիամանթոյի ծննդավայրը - Օտար տղայ - Բախտ - Թախտ:
8. Աղտոտած կամ հինցած - Ուշ:
9. Էական բայ - Վիժակ - Կաշիէ պարկ:
10. Հրիտակել - Սուրիական լրատու գործակալու թիւն:
11. Իտալաբնակ ցեղ - Օտար տղայ - Կլայել:
12. Անուր - Բաժին - Պարտիզանի գործիք:
13. Խօսքի մասերէն - Նախանձիլ:
14. Արու ուղտ - Պապերու ընտրութեան վայր:
15. Յղկել, կոկել:
16. Ուրուր - Արեւելեան անուշեղէն:
17. Կրկնուած բաղաձայններ - Թագաւոր - Վրայ:
18. Պնակ - Յոյն դից - Լծորդութիւն - Տարիք:
19. Կաճ - Հարցական դերանուն - Յուցական դերանուն:
20. Բուսնիլ - Վերջ - Մահակ:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբին խալապցի մարզիչը - Հայ գուսան:
2. Շաղկապ - Կարմիր ներկ - Արեւելեան տիտղոս - Արօրի բռնատեղ:
3. Լիբանանահայ միջ-վարժարանային մարզախաղեր - Իրերայաջորդ գիրեր - Մարմնի վրայ նկար - Համեմը շատ:
4. Լծորդութիւն - Հակած - Արաբ կուսակալ - Զագ բերել:
5. Կղերականի շուրջառ - Լոյծ եւ ձիւթ - Մակալեզու:
6. Կանացի օտար շաբաթաթերթ - Հայաստանի գետերէն - Աղբիւր - Նպարանոց:
7. Զլիչող - Ինք - Հայոց Ը. ամիսը - Որձ:
8. Ուրիշ խօսքով - Գզը Լըմաք գետի պատմական անունը - Ռուս թենիսփուժը՝ Նատիա:
9. Կրկնուած բաղաձայններ - Հայկական ամիսներու Ժ. օրը - Արական օտար տղայ:
10. Խորհրդային վատահամբաւ բռնապետ - Զայնանիչ - Ածականակերտ մասնիկ:
11. Ցածոգի - Կտոր - Եւփիմէ Աւետիսեանի գրչանունը:
12. Միջնաբերդ - Վարսամ - Զրային տարածք:
13. Կախարդական - Անասունի չորցած գանկ - Օտար տղայ:
14. Մեղմ հով - Ս. Գրային մարգարէ - Խորք:
15. Լուսաւորութեան միջոց - Ճանկ - Թանկարժէք մետաղ:

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				

1  
2  
3  
4  
5  
6  
7  
8  
9  
10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20



1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1	Մ	Ա	Ն	Ջ	Ե	Ս	Թ	Ը	Ր	Ս	Ի	Թ	Ի	Կ
2	Ի	Ր	Օ	Ք	Ո	Ա	Ց	Ա	Ի	Ա	Գ	Ա	Ր	
3	Շ	Ա	Ն	Ո	Ի	Կ	Ի	Ս	Ա	Կ	Ա	Ց	Ն	
4	Է	Տ	Կ	Ա	Ր	Տ	Ա	Ի	Ի	Տ	Ծ	Մ	Ն	Ա
5	Լ	Ա	Ղ	Ա	Ղ	Ղ								
6	Տ	Ա	Պ	Կ	Ո	Ա	Ա							
7	Է	Ր	Ա	Ն	Տ	Ղ	Ա	Ց						
8	Ր	Ե	Ն											
9	Ջ	Գ	Ա	Լ										
10	Ա	Կ	Ի											
11	Ք	Թ	Ի	Թ										
12	Ա	Ր	Ց	Ա	Խ	Ս	Ա	Ն	Ի	Ր				
13	Ր	Ե	Ն	Ա	Խ	Ն	Ի	Ք	Լ	Ո	Լ	Շ		
14	Ե	Ճ	Ի	Ռ										
15	Ա													
16	Ն													
17	Խ													
18	Խ													
19	Ա	Ս	Օ											
20	Կ	Ա	Ղ	Ի	Ն									

ԹԻԲ 171 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒԲԸ



ԿՈՄԻՏԱՄԻ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ